

ՍԽ-1
ԲԻ-1
Գ. ՅԱԼՅԵՎ

ԳԱՅԼԵՐԻ ՎՈՂՄԱԿԸ

ՊԻԵՍԱ Յ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ,
ՆԱԽԱԲԱՆՈՎ

Փոխադր.

Հ. Մ. Հովաննիսյան

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1931 ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

891-71

ՅԱ-21

891-71
30-21

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ


1. Ս. Անդրեյեվ.—Սոցիալիստական շինարարության նոր եռագլը 6 4.
2. Կուրեբյև.—Կուլակը կոլտոզի թշնամի 5 »
3. Գյուղատնտեսական կոմունայի կանոնադրություն 2 »
4. Սեալին.—Գառախան ընկեր կոլտոզնիկներին 5 »
5. Մ. Գիգոյան.—Կոլտոզները մասին 6 »
6. Վ. Իվանով.—Նոր եռագլում 5 »
7. Գյուղատնտեսական արտելի կանոնադրություն 2 »
8. Կնաջ աշխատանքը կոլտոզում 8 »
9. Ս. Անդրեյեվ.—Հյուս. Կովկ. գյուղատնտեսության սոցվերակա
աուցման խնդիրները 2 »
10. Կալնին.—Ինչպես կազմակերպել և վարել կաթնատնտեսու
թյունը կոլտոզներում 8 »
11. Ս. Անդր.—Սոցիալիստական շինարարության դոտում 8 »
12. Հյուս. Կով. Յերկը. ծխախոտագործական միության դիմումը . 2 »
13. ՀԿ(ք)Կ Կենտկոմի աշխատանքը (ընկ. Վերոշիլովի ղեկավարումը) 15 »
14. Ս. Հովհաննիսյան. յերգ մարտական փորձի (քանաստեղծու
թյուններ) 20 »
15. Հյուս. Կով. յերկրային 6 կուսկոնֆերենցիայի քանաձևերը . . . 8 »
16. Զարգացրեք կենդանաբուծությունը կոլտոզներում 15 »
17. Յեգիպտացորենի կուլտուրան Հ. Կ. 6 »
18. Միկուլա.— Դեպի նոր կենցաղը կոլտոզներում 5 »
19. Սկոմորոխով.—Գյուտպանեցեք անասուններին վարակումից . 5 »
20. Գուլգոմսկի.— Առաջին սգնու թյուն հիվանդացած գյուղ. կեն
դանիներին 6 »
21. Հնգամյակի յերբորդ տարվա շնորհին 16 »
22. Գյուղատնտեսական միասնական հարկը և գ. ա. սոց. վերա
կաուցումը 10 »
23. Յա. Յելնով.—Ինչպես կազմակերպել խոշոր կոլտոզի անաս
նու թյունը և նրա վարչությունը, 1-ին պրակ 8 »
24. Նույնը, 2-րդ պրակ 4 »
5. Նույնը 3-րդ պրակ 7 »
9. Ս. Դ. Բոսեանցյան.—Անասնաբուծական կոլտոզի և նրա
մասնաճյուղերի կառավարումը 20

ԳԱՅԼԵՐԻ ՎՈՂՄԱԿԸ

ՊԻԵՍԱ Յ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ, ՆԱԽԱԲԱՆՈՎ

11

Փոխադր. Հ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



В. ЯЛЬЦЕВ

ВОЛЧЬЯ СТАЯ

(ПЬЕСА)

Дублетный фонд
госуд. библиотеки СССР
им. В. И. Ленина

На армянском языке
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

4600-84

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
МОСКВА РОСТОВ-ДОН

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- Տեր Յեղիազար—վանահայր
- Տեր Ոգսեն
- Տեր Բարսեղ
- Տեր Ջատիկ
- Կոմիսար
- Անդրեաս
- Նիկոլ
- Բագրատ—կուլակ, իջևանի տեր
- Մարթա—նրա կինը
- Մարթոս—կախարդ
- Ոհան—Բագրատի բանվորը
- Դանիել—աղքատ գյուղացի
- Տեր Մանվել—քահանա
- Կին յերեխայով
- Գյուղացիներ

} վանականներ

} կոմյերիտականներ

Նախաբանը կատարվում է վանքում, 1 և 3 գործող. Բագրատի իջևանում, իսկ 2-ը Մարթոսի խրճիթում:

ՆԱԽԱԲԱՆ

Վանքում, վանահայր Յեղիազարի խուցը: Պատերը զարդարված են կրօնական նկարներով: 2 դուռ, մեկը դեպի դուրս, մյուսը՝ դեպի կողքի սենյակը: Պատի առաջ նստած է ծերունի վանահայր Յեղիազարը: Նա իր առաջ փռված թղթերի և մատյանների մեջ զանազան նշաններ է անում: Լսվում է զանգի ձայն: Յեղիազարը թողնում է մատիտը ու հորանջելով խաչակնքում:

Դրսից. Հանուն հոր, և վորդվո և հոգույն սրբո...

Յեղիազար. Ամեն (գալիս է Ոգսեր):

Ոգսեն. Տեր Յեղիազար, կոմիսարն յեկել է:

Յեղիազար (խաչակնքելով). Ահ, տեր աստված, ելի...

Ոգսեն. Այո, ելի, տեր Յեղիազար:

Յեղիազար. Վորաեղ է հիմա:

Ոգսեն. Ճաշարանում նստել է, կարծեմ յեղբայրներին հարցաքննելու յե:

Յեղիազար. Չլինի թե մեկը խոսք դուրս թռցնի:

Ոգսեն. Ի՞նչ էք ասում տեր Յեղիազար, միթե՞ նրանց դուք չեք ճանաչում: Ո՞վ կարող է նրանց բերնից խոսք դուրս քաշել. «վոչինչ չեմ տեսել, վոչինչ չեմ լսել»—ահա մեր պատասխանը: Ինչպես յեկել է, այնպես էլ գատարկ հետ կգնա:

Յեղիազար. Ինչպես յեկել է այնպես էլ կգնա:

Դրսից. Հանուն հոր և վորդվո և հոգույն սրբո...

Յեղիազար. Ամեն... (գալիս է տեր Բարսեղը):

Ոգսեն. Հը, ի՞նչ կա այնտեղ:

Բարսեղ. Յեղբայրների հետ ճաշարանում նստել է հարց ու փորձ է անում մինչև ուղն ու ծուծը, թե «ի՞նչ, ի՞նչպես, ինչո՞ւ»... «բրիլիանտներ յեղել են ձեզ մոտ»... զգվելի մի լա-կոտ է...

Յեղիազար. Հ'մ, իսկ մերոնք...

Բարսեղ. Պնդում են իրենց ասածի վրա՝ «վոչինչ չը-գիտենք»: (Յածր ձայնով) յերեկ նորից խուզարկեն: Նրանցից ամեն ինչ կարելի յե սպասել:

Ոգսեն. Ահ, տեր աստված, տեր աստված...

Յեղիազար. Մի անգամ խուզարկեցին ելի: Ամբողջ տաճարը խուզարկեցին, բոլոր խուցերը փորփորեցին, ել ի՞նչ են ուզում, քի՞չ եր:

Բարսեղ. Դեռ քսան անգամ էլ կխուզարկեն, գիտե՞ք ինչ մարդիկ են:

Յեղիազար. Թող փնտրեն, միևնույն է վոչինչ չեն գտնի, հի... հի... հի... (ևրա նման բոլորն էլ ծիծաղում են): Բրիլիանտները հարմար և ապահով տեղ են պահված, վոչ վոք չի կարող գտնել: Նրանք անանցանելի ճահիճների և խիտ անտառների մեջ ապահով պահված են:

Ոգսեն. Տեր Յեղիազար, վորտեղ են պահված:

Յեղիազար (ցածր). Այդ գիտե աստված, յես և նա, ում մոտ պահված են: Յեղբայրք իմ, յերբ հարկավոր լինի, այն ատեն ձեզ էլ բաց կանեմ այդ գաղտնիքը: Կանցնեն 2—3 տա-րիներ, փոթորիկը կղազարի, են ժամանակ թանկագին քարերը լույս աշխարհ դուրս կգան:

Ոգսեն. Իսկ յեթե են մարդը բուլշեիկների ճանկն ընկնի, հետո ի՞նչ կլինի:

Յեղիազար (սուս ծաղրով). Չի ընկնի: Նա անտառների մի խուլ անկյունում է ապրում: Գուցե և բուլշեիկները մինչև որս ենտեղ չեն յեղել: Սովաճոր գյուղը գիտե՞ք:

Ոգսեն. Վա՞նց չգիտենք. ետեղից 30 վերստ է:

Բարսեղ. Իսկապես, վոր խուլ անկյուն է:

Յեղիազար. Այնտեղ միայն ձմեռը կարելի յե գնալ, իսկ գարնանն և ամառը, վոչ մի կերպ չի կարելի: Չորս կողմը ճահիճներ, ձորեր, անտառներ են, այնտեղ գուցե և բուլշե-վիկի յերես դեռ չեն տեսել, այլ միայն լսել են նրա մասին:

Բարսեղ. Ուրեմն, տեղը ապահով է:

Ոգսեն. Ավելի ապահովը չես գտնի:

Յեղիազար. Յերբ այդ քարերը մեզ պետք լինեն, դուք կգնաք, կբերեք: Բացի մեզանից, վոչ վոք չի ոգտվելու, իսկ բուլշեիկները իրենց յերազի մեջ էլ չեն տեսնի:

Բարսեղ. Թող սպասեն, վոր մենք ել մեր վոսկիներով
և բրիլյանտներով նրանց ինդուստրիալիզացիային ոգնենք: Ար-
դյոք նրանց փորը չի ցավի: Հն հն հն, (ծիծաղում են) չէն
ուզում, վոր մեր ձեռքով մեր տունը քանդենք, հն... հն... հն...
(փեղոյրը ծռած, մտուխը գոգգված, վագում է սեր-Չասիկը):

Ոգսեն. Ի՞նչ է պատահել քեզ, տեր-Չատիկ:

Չատիկ. Ո՛հ, տեր Յեղիազար, կոմիսարը...

Յեղիազար. Ի՞նչ, կոմիսարը...

Չատիկ. Այստեղ ձեզ մոտ է գալիս:

Յեղիազար. Տեր աստված, ահա քեզ փորձանք:

Բարսեղ. Աշխարհ, աշխարհ, ինչ որերի հասանք:

Յեղիազար. Անիծյալ լինեն, ելի մեզ տալն ու վրա
յեն անելու: Ով ամենակալ, մեր վրձ մեղքերի համար ես մեզ
պատժում:

Չատիկ. Մի խոսեք...

Ոգսեն. Դու, տեր Յեղիազար, անձնատուր չլինես:

Յեղիազար. Դու ինձ մի սովորեցնի: Ասելիքս գիտեմ.
«չեմ լսել, չեմ տեսել» — ահա իմ պատասխանը:

Բարսեղ. Աստված քեզ ոգնական:

Յեղիազար. Յեղբայրք, դուք գնացեք կողքի սենյակը
(գնում են կողքի սենյակը. Յեղիազարը կողպում է դուռը:
Ծեծո՞ւմ են մյուս դուռը: Մտեք (մտնում է կոմիսարը):

Կոմիսար. Դուք եք վանահայր:

Յեղիազար. Յես եմ... խնդրեմ նստեցեք:

Կոմիսար. նստում ե ու պորտեթից քրթե ե հանում).
Ի՞նչպես է ձեր ազգանունը:

Յեղիազար. Ավետյանց:

Կոմիսար. Քաղաքացի Ավետյանց, 1922 թվի հունվար
ամսում, սովյալների ոգտին գրավել են ձեր վանքում մի շարք
յեկեղեցական թանգարժեք իրեր...

Յեղիազար. Այո...

Կոմիսար. Դուք ամեն կերպ շանացել եք խանգարել
այդ գործին:

Յեղիազար. Ի՞նչ եք ասում, ընկեր քաղաքացի, ընդ-
հակառակը, յես վողջունել եմ այդ... այդ քայլը: Սովյալներին
ամեն կերպ ընդառաջ պետք է գնար: Քրիստոս ինքը...

Կոմիսար. Իսկ ինչո՞ւ դուք ձեր քարոզներով ժողովրդին
կոչ ելիք անում, վոր ամեն կերպ պաշտպանեն վանքում պահ-
ված թանգարժեք իրերը:

Յեղիազար. Դա սուտ է, մենք ամեն կերպ աշխատել
ենք ոգնել մեր սովամահ յեղբայրներին: Նույնիսկ մեր վանքը
2 մանուկներ վերցրեց իր խնամքի տակ:

Կոմիսար. Այո, բայց դրանց ձեզանից վերցրին, վո-
րովհետև դուք նրանց բատրակներ ելիք դարձրել: Համենայն
դեպս, դա մեր խնդրին չի վերաբերում: Յես այստեղ ուրիշ
գործով եմ յեկել: Յերբ իշխանությունը վերցնում եր թան-
գարժեք իրերը մի քանի պարկերների միջից իսկական բրի-
լյանտների փոխարեն, կեղծերն են դուրս յեկել:

Յեղիազար. Մեզ մոտ իսկական բրիլյանտներ յերբեք
ել չեն յեղել: Յեվ վճարողից լինեյին: Մեր վանքը աղքատ է:
Հարձուտ ուխտավորներ քիչ են գալիս մեզ մոտ, ամենից շատ
աղքատ գյուղացիք են գալիս, իսկ նրանցից ի՞նչ կարելի յե
վերցնել, քոս կոպեկներ...

Կոմիսար. Յենթադրենք, թե խորամանկություն էք ա-
րել. կոպեկներից ել չեք խորչել: Ուրեմն, դուք ասում եք, թե
պարկերներէ մեջ յեղած բրիլյանտները կեղծ են յեղել:

Յեղիազար. Ամենահասարակ ապակու կտորներ:

Կոմիսար. Ապա ինչո՞ւ ձեր վանքը հուշակավոր եր իր
բրիլյանտներով:

Յեղիազար. Գյուղացիների մեջ իսկապես խոսվում է,
թե մեր վանքի պարկերները բրիլյանտներով են: Դուք ել գի-
տեք, թե ինչ ժողովուրդ է: Ինչ վոր փայլուն է, կարծում են
բրիլյանտ է: Իսկ թե իսկական է թե կեղծ, իրենք ել չգիտեն:

Կոմիսար. Ուրեմն, իսկական բրիլյանտներ յերբեք ձեր
վանքում չեն յեղել:

Յեղիազար. Յերբեք:

Կոմիսար. Լավ, մենք այս որերս նորից քննություն
ենք կատարելու: Մինչև այդ վանքից չհեռանաք:

Յեղիազար. Լավ:

Կոմիսար (վեր կենալով). Յտեսություն:

Յեղիազար. Յտեսություն (կու. գնում է):

Ոգսեն (մտնելով). Գնացել է...

Յ ե ղ ի ա զ ա ը. Փնարեցեք, փռարեցեք և կղանք: Հի...
հի... հի...

Ո գ ս ե ն. Ա՛խ դո՛ւ, «սովյալների համար»... դուք ինքներդ
սովածներին կերակրեցեք, իսկ վանքի ունեցվածքին աչք մի
տնկեք, անաստվածներ:

Յ ե ղ ի ա զ ա ը. Ուրիշի հաշվին են ուզում կերակրել սո-
վյալներին: Չե, աղափսյակներս, չե, այդ բրիլյանտները ձեզ չեմ
կերցնի, հի... հի... հի...

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սովածոր գյուղի մոտ Բագրատի իջևանը: Գերաններիվ շինված պա-
տեր, պատուհաններին չթից վարագույրներ, անկյունում ոռոսական
մեծ վառարան: Յ դուռ դեպի մթերանոց, վորտեղ Ոհանն է, մյուսը
տանտիրոջ վերնատունը և յերրորդը՝ նախասենյակ: Սեղանի շուրջը
նստել են Ոհանը, Անդրեասը և Նիկոլը: Ինքնայեռ և բաժակներ: Յե-
րեկո: Դրսում բուք ու բորան: Փողոցում շների հաջոց:

Ո հ ա ն. Վանահորն ու վանահայրերին հարցաքննեցին, բայց
թանգարժեք քարերը չգտան: Բոլորը միաբերան ասել են. «մեր
վանքում այդպիսի քարեր չեն յեղել»:

Անդրեաս. Դու ի՞նչ ես կարծում, յեղել են այդպիսի
քարեր:

Ո հ ա ն. Ո՞վ գիտի, կարող ե և յեղած լինեն: Հեղափո-
խությունից առաջ այդ վանքը մեր նահանգի ամենահարուստ
վանքն էր համարվում: Տեր Յեղիազարը կարողանում էր ժո-
ղովրդին դեպի իրեն քաշել: Առևտրականներ, հարուստներ, գա-
լիս էյին, իսկ մեր ախպեր գյուղացիների մասին ասելն էլ ա-
վելորդ է, թափվում հա՛ թափվում էյին: Այդ ժողովուրդը հի-
մա կրոնից սառել է, իսկ ջահելներին փայտով չեա կարող յե-
կեղեցի քաշել: Իսկ առաջ, կիրակի կամ տոն որը ծերն ու ջա-
հելը զանազան տեղերից թափվում էյին յեկեղեցի:

Մ ա ը թ ա (կանչում է վերեվից). Ոհան...

Ո հ ա ն. Ի՞նչ է...

Մ ա ը թ ա. Ի՞նչ է... Ի՞նչ է... գնա մի տես այնտեղ շունը
ինչո՞ւ յե հաջում: Յերևի մարդ է գալիս. յեթե չասեն, ինքդ
գլխի չես ընկնի:

Ո հ ա ն. Նա միշտ էլ հաջում է, յերևի ցրտից է:

Մ ա ը թ ա. Յերբ քեզ ասում են, գնա, ելի:

Ն ի կ ո լ . Ռ՞վ է այս կինը:

Ո հ ա ն (ցածր). Տանտիրուհին է, այնպես չարն է անտեր մնացածը, վոր առավոտվանից մինչև յերեկո այն շան նման հաջում է (վառելով լապտերը, կիսամուսակը ուսերին գրնում է):

Ն ի կ ո լ (գնում է դեպի պատուհանը, վառագույրը վերցնելով). Ես ի՞նչ խուլ անկյունն է:

Ա ն դ ր ե ա ս . Ապա ի՞նչ էյիր ուզում: Իհարկե, բաղաք չի, այլ իսկական գյուղ: Մեզ այստեղ անելու շատ գործ կա (գրուպից յավում է Ոհանի ձայնը). «գայլուկ, գայլուկ» (շուկը միառժամանակ լուռ է յեվ նորից ավելի ուժեղ սկսում):

Ն ի կ ո լ . Մինչև գյուղ 4 վերստ է մնացել:

Ա ն դ ր ե ա ս . Տեսնում ես ինչ բուր է: Այսպիսի յեղանակին հեռու չես գնա: Առավոտյան կհանդարտի, այնպես ճանապարհ կընկնենք: Տեղ կհասնենք, կգտնենք գյուղխորհուրդն ու հետո գործի կանցնենք:

Ն ի կ ո լ . Հետաքրքիր է իմանալ, թե գյուղացիք ինչպես կընդունեն մեզ:

Ա ն դ ր ե ա ս . Իհարկե, սկզբում մի քիչ կխրտնեն: Գյուղում նոր մարդ չեն սիրի, իսկ հետո կտեսնենք: Ամեն ինչ մեզանից է կախված: Չբավորների հետ կբարեկամանանք, առաջին հերթին խրճիթ-ընթերցարան կկազմակերպենք, իսկ հետո... գործը կգնա...

Ն ի կ ո լ . Այս վայրը կարծես մի արջի վորջ է, վոր կողմից նայես անտառ ու ձյուն, ձյուն ու անտառ: Գյուղում նույնիսկ գպրոց չկա:

Ա ն դ ր ե ա ս . Անտառները չեն խանգարում, նրանք հարկավոր են, իսկ վոր դպրոց չկա, դա վատ է: Վոչինչ, դպրոց ել կլինի (գալիս է Ոհանը, լապտերը վառում յեվ կիսամուսակը կախ ցալիս):

Ո հ ա ն . Բամին կատաղածի նման այնպես է փչում, վոր վոտի վրա կանգնել չես կարող:

Մ ա ր թ ա (վերեվից). Ռ՞վ է այնտեղ:

Ո հ ա ն . Յես եմ:

Մ ա ր թ ա . Գիտեմ, վոր դու յես. փողոցում ով է:

Ո հ ա ն . Մարդ չկա, շունն է հաջում:

Մ ա ր թ ա . Շուտ-շուտ դուրս գնա: Վոր նստում ես, ել պրծավ: Մինչև կողքիդ չտան՝ տեղիցդ չես շարժվի:

Ա ն դ ր ե ա ս . Ինչ չար կլին է:

Ո հ ա ն . Շունն քաշել չի տալիս: Իսկական սղոց է, ամբողջ ուրը սղոցում է: Թյու, յեթե իմ կամքովը լիներ, այստեղ մի ուր ել չէյի մնա:

Ն ի կ ո լ . Բա ի՞նչ, գնա ելի:

Ո հ ա ն (հոգոց փառելով). Ասելը հեշտ է, իսկ անելը: Մինչև գարուն պարտավոր եմ այստեղ աշխատել:

Ա ն դ ր ե ա ս . Ինչո՞ւ յես պարտավոր:

Ո հ ա ն . Բագրատից, իմ տիրոջից, պարտքով ցորեն եմ առել ընտանիքս կերակրելու: Հող քիչ ունենք, մեր չորս կողմը անտառներ և ճահիճներ են: Մեր հացը մեզ հազիվ մինչև ծնունդ բավարարի, իսկ դրանից հետո հարկավոր է լինում մի կերպ անցկացնել: Աշնանը փոխարինաբար առածս վերադարձրի և անա 3 ամիս այդ «բարության» համար ձրի աշխատում եմ:

Ա ն դ ր ե ա ս . Ուրեմն քո Բագրատը իսկական կուլակ է:

Ո հ ա ն . Կուլակ, այն ել ինչպիսի կուլակ: Ամբողջ գավառն իր ճանկերումն է բռնել: Մեզ մոտ ժողովուրդը խավար է, խուլ անկյուն, իշխանության մարդիկ քիչ են լինում մեզ մոտ: Յեթե մեկն ել գա, գյուղացիներից վոչ վոք բերանը վախից բաց չի անի: Ռ՞վ կուզենա այսպիսի թշնամի ունենալ:

Ա ն դ ր ե ա ս . Սպասիր, սիրելիս, դեռ մենք այստեղ տեղավորվենք, քո Բագրատների սոչն ել կխուզենք: Մենք կոմսոմոլիստներ ենք, կամավոր յեկել ենք քաղաքից այստեղ աշխատելու և ձեզ ոգնելու, վոր բարելավեք ձեր կյանքը:

Ո հ ա ն . Այդ լավ է, վոր ձեզ ուղարկել են, թե չե սատանան գիտե, թե բանը վորտեղ կհասնեն: Ուղղակի պառկիր ու մեռիր: Ախպեր, զոռբա յեն, զոռբա: Դժվար է նրանց հետ կովել: Որինակ յես, յեթե Բագրատին մի խոսք ասելու լինեմ, հաջորդ ուրը կմնամ անտուն և նույնիսկ գլուխս ել զոհ կտամ: Յեթե յես մենակ լինեյի, ելի վոչինչ, բայց յերեք յերեխա, կին և մայր ունեմ... պետք է լեզուս կապված պահեմ: Ահա թե ինչպիսի գործեր կան (պատուհանը ծեծում են, շուկը ավելի յե հաջում):

• Ն ի կ ո լ . Դուռը...

Ոհան. Ո՞վ է այս ժամանակ (հազնվում յեվ լապսերը վերցնելով գնում է):

Անդրեաս. Ե՞, ընկեր, ես բանին ի՞նչ ես ասում:

Նիկոլ. Ի՞նչ ասեմ:

Անդրեաս. Մի խոսքով, շատ գործ կա անելու:

Ոհան (սննելով). Մորաքույր, թոթափվիր նախասենյակում և մտիր... (սննում է մի կին մուսակով, գրկին փաթաթված յերեսխա):

Կին. Բարի յերեկո ձեզ:

Ոհան. Բարի յերեկո... յերեսխան այստեղ դիր և հանվիր...

Կին. Շնորհակալ եմ, սիրելիս (յերեսխան թողնելով սեղանի վրա, հանում է մուսակը):

Ոհան. Ինքնայեռի մոտ նստիր... Սառե՛լ ես:

Կին. Ո՞հ, կարծես ձեռք ու վոտքից զրկվել եմ, վոչինչ չեմ զգում, կարծում եյի թե դաշտում կսառչեմ: Ճանապարհից շեղվեցի, մտա թիբերի մեջ, մոլորվեցի, վոր կողմը շուռ եմ գալիս, թուփ ու ձյուն: Մտածում եյի թե վերջս հասել է: Լավ եր վոր ձեր շան հաջոցը լսեցի: Մի կերպ հասա:

Ոհան (թեյ լցնելով). Այ կին, ես բուր-բորանին ինչո՞ւ յես յերեսխան գրկիդ ճանապարհ ընկել, վճրտեղից ես:

Կին. Վերի գյուղից եմ, ախպեր:

Ոհան. Ո՞ւր ես գնում այսպես:

Կին. Սովածոր եմ գնում:

Ոհան. Սովածոր, ուրեմն մեզ մոտ ես գնում... Յես ինքս ել սովածորցի եմ: Ո՞ւմ մոտ ես գնում:

Կին. Մաթոս հեքիմի մոտ:

Ոհան. Հ՛մ, ի՞նչ հիվանդությունով:

Կին (թեյ խմելով). Դե, յերեսխուս համար եմ գնում: Չորսոր ե տկար ե յերեսխաս: Վոչ ուտում ե, վոչ ել խմում: Զանի վրա կարմիր բծեր են դուրս յեկել: Մեռոնի ջրով ել սրակեցի, որհնված կաթ ել խմցրի, վոչինչ չոգնեց:

Նիկոլ. Իսկ բժշկին չե՞ս տարել նրան:

Կին. Բժշկի՞: Ի՞նչ ես ասում, ախպեր ջան, ի՞նչ ոգուտ եդ բժշկից: Մի անգամ յեղել եմ, բայց երթում եմ կերել ել չեթթալ նրանց մոտ: Ե, բժիշկը մի փոքրիկ սրվակ տվեց ու...

Անդրեաս (Նիկոլին). Զերմաչափր...

Կին. Հետո տվեց կաթիլներ. «Յ կաթիլ լցրու» ասում է, Յ կաթիլը կոգնի: Ենտեղ մի ծախ խմելու բան ել չկա:

Անդրեաս. Լավ, հիմա ո՞ւր ես գնում:

Կին. Մաթոսի մոտ: Նա շատ լավ հեքիմ է... Սաղ գալանն ե բժշկում...

Ոհան. Յես նրան չեմ հավատում:

Կին. Մաթոսի՞ն չես հավատում: Գիտե՞ս նա ինչպիսի հիվանդություններից ե բժշկում: Նա ամեն բանի ճարը ունի. «տեր վողորմյա» յե կարդում, փչում ե յերեսին ի վեր, լողացնում է, բաղնիք ե ուղարկում...

Ոհան. Բաղնիք, հա՛, նրա բաղնիքի պատճառով իմ հայրս ել այն աշխարհը գնաց:

Կին. Են աշխարհը:

Ոհան. Այո, են աշխարհը, մորքուր. անցյալ տարվա գարնանն եր: Դաշտային աշխատանքները սկսվել եյին, բոլորը աշխատում եյին իսկ նա տեղից չեր կարողանում շարժվել: Ուղեցի բժշկին տանել, չե ու չե, «յես բժշկին չեմ գնա» ասում է, դուք Մաթոսին կանչեցեք: Ի՞նչ արած, մայրս բերեց Մաթոսին: Նա նայեց, հմ, ասում է, «նրա մեջ գողոց ե նստել, հարկավոր ե, ասում ե բաղնիքը տաքացնել և նրան չոր ավելով քրտնացնել»: Մերոնք տաքացրին բաղնիքը: Ենքան շոգ եր բաղնիքում, վոր շնչել չեր կարելի: Կանչեցին դրկիցներին ել և գործի անցան: Սկզբում հայրս դիմանում եր, իսկ հետո սկսում ե բղավել ու հայհոյել. «թողե՛ք, ախպեր, չեմ կարող», իսկ Մաթոսը կանգնած բաղնիքի դռան առաջ, գրգռում եր գյուղացիներին. «ուժեղ, ուժեղ, հալածեք դողոցը, հալածեք անիծյալին...» Իսկ գյուղացիք ջանք եյին թափում. յերկուսը հորս բռնել են, իսկ չորսը ավելներով տալիս են հա՛ տալիս կոնակին: Հայրս բղավեց, բղավեց և հետո լսեց:

Կին. Ե՛հ, դու ել:

Ոհան. Նրան ենպես մի ժամ ձեծեցին և հետո բաղնիքի նախասենյակը տարան:

Կին. Ե՛, ի՞նչ, վոնդեցի՞ն:

Ոհան. Հա՛, վոնտեցին, բայց վոչ թե գողոցը, այլ հոգին... Ծերուկին մինչև մահ քրտնացրել են: Յես ցույց կտայի այդ անորեն Մաթոսին: Սատանան ջրից չոր դուրս յեկավ, ասում է. «նա բղավելով, փոխանակ գողոցը դուրս վոնդելու, դեպի ներս ե հալածել»:

Կիւն. Բա, տեսնում ես, ծորուկը ինքն է մեղավոր, բղավելով հիվանդութունը ներս է փախցրել:

Ոհան. Այ քեզ բան, դե արի ու խոսի քեզ հետ:

Կիւն. Մաթոսը եստեղ մեղավոր չի:

Նիկոլ. Մորքուր, դու թքի հեքիմի վրա ու յերեսան տար բժշկի մոտ:

Կիւն (մեծադական ցարժում է անում):

Անդրեաս (ցածր). Թող Նիկոյ, մեկ է, նա քեզ չի լսի:

Նիկոլ. Բայց պետք է նրան բացատրել:

Անդրեաս. Դու ինչքան ուզում ես բացատրի, մեկ է, նա քեզ չի հասկանա: Սպասի մի տեղավորվենք, են ժամանակ գործի կանցնենք: Գործը շատ է... (Ոհանին) Լսիր, ախպերացու, մեզ վերտեղ ես պառկեցնելու:

Ոհան. Վերտեղ... Չեղ հետ բան-ման չո՞ւնեք:

Անդրեաս. Բացի մի սավանից, ուրիշ վոչինչ (սուպրակից հանում է սավանը: Նրա հետ միասին ընկնում են գեսին մի ֆանի պարիկներ, մտում յեվ գբիմի այլ պարագաներ):

Ոհան. Եդ ի՞նչ բան են:

Անդրեաս. Պարիկներ են, ձեզ մոտ թատրոն ենք կազմակերպելու:

Ոհան. Ի՞նչ էք ասում... (Անդրեասը մի կողմ դառնալով դնում է մի այլխառն պարիկ, բեխերը յեվ մուրուֆն ու դառնում է կնոջը):

Կիւն (վար գցելով թեյի պնակը). Վո՛ւյ ֆողը գլխիս, ախպեր ջան...

Անդրեաս (իջեցնելով պարիկը). Վախեցա՞ր:

Կիւն (խաչ հանելով). Աստված, աստված, եդ ի՞նչ էր:

Ոհան. Ճարպիկ... (վեր կենալով) Ահա ինչ, տղեք դուք պառկեցեք իմ տեղումը, մթերանոցում:

Նիկոլ. Իսկ դո՞ւ:

Ոհան. Յես տեղ կձարեմ... Իսկ մորքուրին կտեղավորենք ասանտիրոջ սենյակում:

Կիւն. Յես քուն չունիմ (վեր է կենում յեվ սկսում է խաչակնել). Շնորհակալ եմ:

Ոհան. Վոչինչ:

Կիւն (յերեսան վերցնելով). Վախեցում եմ յերեսին բան

պատահի: Յեթե բուքը չլիներ, անմիջապես կգնայի Մաթոսի մոտ: Հե՛չ սիրոս հանգիստ չէ:

Ոհան. Լուսաբացին ամեն ինչ կհանդարտի, են ժամանակ ել կգնաս (ֆամու ձայնի հետ լսվում է զանգակների ձայնը): Տերս գալիս է:

Մարթա. Ոհան, Բազրատն է գալիս:

Ոհան. Լսում եմ:

Մարթա. Բա վոր լսում ես, գնա դիմավորի:

Անդրեաս. Գնանք պառկենք, Նիկոլ:

Ոհան. Սպասեք, տեսեք իմ տիրոջը:

Անդրեաս. Ծանոթանալու առիթ կլինի: Չորս վերստի վրա յենք լինելու, հաճախ կտեսնվենք (զնում են մթերանոց):

Ոհան (հագնելով կիսամուշակը). Մորքուր, յեթե ուզում ես գնա պառկի, առավոտյան հենց առաջին աքրորականչին կզարթնեցնեմ քեզ:

Կիւն. Մեկ է, չեմ քնելու, յերեսան մտքիցս չի գնում:

Ոհան. Դրա մասին մի մտածիր, կքնես (լսվում է ան մոտ կանգնող ձիերի յեվ կառփի ձայնը: Նույնպես կուպիս ձայն «Թփրոտու... անիծյալներ»): Ոհանը դուրս է վազում, Կիւնը խաչակնելով դուրս է գալիս մյուս դռնից: Քիչ հետո նես են քափվում Բագրասը, Ոգսեն յեվ Բարսեղ ֆահանաները: Յերեմն ել կիսահարբած են):

Բագրաս. Ոհան... շարժվիր... տերդ գալիս է... Ոհան...

Ոհան (ներսից). Գալիս եմ...

Բագրաս. Շո՛ւտ արա...

Ոհան (մտնելով). Ահա յեկա:

Բագրաս. Վո՛չ թե «յեկա», այլ «համեցեք»: Չգիտես ինչպես պետք է խոսել խաղեյինների հետ: Գուրքս վար առ (Ոհանը առնում է կոնակից ֆուրք, վերեվից իջնում է Մարթան): Տիրուհի, ընդունիր հյուրերին:

Ոգսեն. Վողջո՛ւյն ձեզ:

Բարսեղ. Որհնյալ ըլեք. աստված տան տիրոջ և տիրուհուն առողջութուն և հաջողութուն պարգևե:

Բագրաս (նստելով դիվանի վրա). Եհ, վերջապես տանն ենք: Մարթա, սարքիր սեղանը:

Մարթա. Ընթրելու յեք, թե թեյելու:

Բագրաս. Ընթրելու յենք, մի-յերկու հատ ել...

Մ ա ռ թ ա (սարթեյով սեղանը). Կամաց, կենսություններ ունենք:

Բ ա գ ը ա տ. Ո՞ւմ ինչ բանն է, տունը իմը չի: Ո՞վ կարող է ինձ հրամայել: Յես եմ տանտերը... Ոհան, գնա ձիյերը արձակիր... (Ոհանը գնում է): Հարգելի հայրեր, հանվեցեք, հանգստացեք, ընթրելու յենք, թեյելու յենք: Մրսեցի՞ք:

Ո գ ս ե ն. Մեղավորիս, տեր աստված, միշտ այսպիսի ցուրտ որեր կուղարկի:

Բ ա գ ը ա տ (Մարթային). Ճանապարհին հանդիպեցի սըրանց և վերցրեցի հետս: Գնացինք բավոր Սիմոնի մոտ, մի քանի հատ այնտեղ կոնծեցինք և այստեղ յեկանք:

Ո գ ս ե ն (ձեռները շփելով). Ձեռներս այրվում են...

Բ ա գ ը ա տ. Հիմա կտաքանանք... Մարթա, գնա շ շիշ ասլանի կաթ բեր:

Մ ա ռ թ ա. Ախր բավական է, մի տես, քիթդ արդեն կարմրել է...

Բ ա գ ը ա տ. Դու իմ քթի հետ գործ չունես... ավելի լավ է դու քոնը տես...

Մ ա ռ թ ա. Դե յես ինչ... յես վոչինչ...

Բ ա գ ը ա տ. Հն, հն... Ձեմ սիրում, յերբ կանայք խառնրվում են ամեն բանի մեջ: Իա ձեր խելքի բանը չի: Կանանց մազը յերկար է, բայց խելքը կարճ: Այդպես չէ, տեր հայր: Դե, շուտ... շարժվիր... (Մարթան գնում է): Ուրեմն, եդպես, դուք քաղաքում եք ապրում, չէ:

Ո գ ս ե ն. Այո, քաղաքում:

Բ ա գ ը ա տ. Հիմա ձեր բանը վատ է: Վանքում հանգիստ ապրում եյիք, կարծես բրիտտոսի թևերի տակ, իսկ հիմա եդպես չի:

Ո գ ս ե ն. Ել մի ասի. կոմսոմայը, սատանան նրան տանի, մեզ զերեզման պիտի քշի... (Մարթան մտնում է 2 շիշ ողիյով):

Բ ա գ ը ա տ (լցնելով բաժակները). Իսկ հիմա ի՞նչ է ձեր վանքը:

Ո գ ս ե ն. «Մանկական գաղութ» են շինել: 300 անվարտիքներ լցրել են այնտեղ, նրանց խմբապետներն ել՝ ուսուցիչները՝ այնտեղ են ապրում:

Բ ա գ ը ա տ. Ա՛հ, ժամանակ, ժամանակ: Վանքում գաղութ... Մինչև ուր են հասնելու են բողջիկները...

Բ ա ը ս ե ղ. Ամեն ինչ անցողիկ յեպիցի:

Բ ա գ ը ա տ (բաժակը վերցնելով). Դե վերցրեք, հայրեր: Ո գ ս ե ն. Մենք արդեն թրջել ենք կոկորդներս...

Բ ա գ ը ա տ. Ե՛հ, ինչ կա վոր: Հոմ արազը պաս չէ: Աստված դրա համար չի պատժի...

Ո գ ս ե ն. Դե, ամենակալն աստված ձեզ հաջողութուն շնորհեցե:

Բ ա ը ս ե ղ. Ձեր կենացը (խմում են):

Բ ա գ ը ա տ. Ես որվա իշխանութունից, բացի փորձանքից, ուրիշ վոչինչ չես կարող սպասել:

Ո գ ս ե ն. Մնացինք անտեր, անթիկան (գալիս է Ոհանը):

Բ ա գ ը ա տ. Արձակեցի՞ք:

Ո հ ա ն. Արձակեցի:

Բ ա գ ը ա տ. Կեր տվի՞ր:

Ո հ ա ն. Այո, տվի:

Բ ա գ ը ա տ. Հիմա կարող ես գնալ պառկել (Ոհանը գնում է): Դե, խմենք յերկորդն ել (լցնում են բաժակները):

Ո գ ս ե ն. Խմենք (խմում են):

Բ ա գ ը ա տ (թխելով). Լավ արազ է, չէ, յես եմ քաշել:

Ո գ ս ե ն. Այո, աշխարհը փչացավ: Աստված մեզ, մեր մեղքերի համար պատժում է: Մենք մեզ համար չենք ասում, մենք փոքր, աննշան մարդիկ ենք: Բայց թե մեր հայր Յեղիազարը այս հալածանքներն և ծաղրանքները ի՞նչպես է տանում: Առաջ վանքի գլուխն եր, հարգելի մարդ եր: Ամեն կողմից թափվում գալիս եյին հավատացյալները նրա մոտ, իսկ հիմա... (Այս է փառում: Նույնը կրկնում է յեվ Բարսեղը) Թալանեցին վանքը:

Բ ա գ ը ա տ. Ի՞նչպես թե «թալանեցին»:

Ո գ ս ե ն. Շատ պարզ: Բոլոր յեկեղեցիների թանգարժեք իրերը հավաքեցին, տարան և մերը:

Բ ա գ ը ա տ. Յենթադրենք, թալանեցին, խոմ բոլորը չտարան:

Ո գ ս ե ն. Ինչպես թե չե: Պարկերների վրայից նույնիսկ արծաթյա շրջանակներն են հանել:

Բ ա գ ը ա տ. Շապիկները հանել են, բայց թանգարժեք քարերը յերկի մնացել են ձեզ մոտ:

Բ ա ը ս ե ղ. Ի՞ի՞նչ քարեր...

Բ ա գ ը ա տ. Են, վոր վաճառականները իր աղջկա մահից հետո նվիրեց:



4600-84

Ոգսեն. Դրանք սուտ բաներ են:
Բարսեղ. Իհարկե:
Ոգսեն. Վաճառականը դրանք նվիրել է 15 տարի առաջ:
Իսկ են ժամանակից ինչքան շատ ջուր է հոսել...
Բագրատ. Ի՞նչ է, քարերն ել են հոսել... (Լցնում է):
Բարսեղ. Մենք դրանք շատ վաղուց նվիրյալ ենք ազգ-
ոգուտ գործի համար:
Բագրատ. Ե՛հ դու յեւ բան ասացիր: Եղ ի՞նչ ազգոգուտ
գործի յեք ծախսել: Բա ի՞նչ քարեր ելին սրբերի վրա, վորոնք
կային մինչև գրավումը:
Ոգսեն. Քարեր... միայն թե կեղծ... հասարակ ապակուց
շինված:
Բագրատ (սվժիծաղով). Դե լսվ, տեր հայր, Բագրատին
դուք ղժվար կխաբեք, նա հեշտ խաբվող պտուղ չէ: Մինչև վոր
յես չխաբեմ, ուրիշն ինձ չի խաբի:
Ոգսեն. Ազահ մարդը միշտ ուրիշի ունեցածը կհաշվի:
Բագրատ. Մի՞թե յես դատապարտելու համար եմ խո-
սում: Ենպես, խոսքի համար: Իսկ դենը աստված ձեզ հետ: Եղ
գործն արդեն հնացել է, անցել է քանի տարի: Այս իշխանության
որով առանց խաբեբայության չես ապրի: (Դուռը թխկացնում
են) Եղ ս՛ւմ է սատանան այսպիսի ժամանակ բերել (տուրվե-
լով գնում է յեվ վերադառնում Դանելի հետ):
Դանել (նկւով). Բարի յերեկո ձեզ:
Բագրատ. Բարի յերեկո, յեթե չես ստում:
Դանել. Մի խնդիրքով եմ յեկել քեզ մոտ, Բագրատ ախ-
պեր:
Բագրատ. Կես գիշերին խնդիրքի ժամանակ ես գտել:
Դանել. Բանն եղպես յեղավ, ուրիշ ձար չգտա:
Բագրատ. Ի՞նչ է պատահել:
Դանել. Բագրատ ախպեր, յեղիր իմ հայրը, ինձ մի բա-
րություն արա: Խրճիթս շինելու փայտ է հարկավոր, ձի չու-
նեմ, վոր բերեմ: Տուր ինձ մի 2—3 որով իմ գրավ թողածս
ձին:
Բագրատ. Իսկ պարտք բերիր:
Դանել. Բագրատ ախպեր, մի քու կոպեկ չունիմ: Սպա-
սի մի հացս հավաքեմ, անպատճառ պարտքս կտամ:
Բագրատ. Են ժամանակ ել ձին կառնես: Ինձանից առել

ես 20 մանեթ: Ամիսը 5 մանեթ տոկոս, այդ քեզ անում է բո-
լորը 30 մանեթ: Կբերես եղ փողը, կստանաս ձիդ:
Դանել. Բագրատ ախպեր, յես...
Բագրատ. Իսկ նրա 2 ամսվա կերը... ահա քեզ քո
պարտքը կլինի 50 մանեթ:
Դանել. Ախր, յես հիմա փող չունեմ, վորտեղից գտնեմ
տամ, մատներիցս քամեմ: Իսկ ձին հարկավոր է: Դոնե 2 ո-
րով տուր: Մնատուից սյուների համար ծառ բերելուց հետո ան-
միջապես ձին կբերեմ:
Բագրատ. Չեմ տա. ձին գրավ եմ վերցրել քեզանից:
Դանել. Գիտեմ:
Բագրատ. Վոր գիտես, ինչի՞ յես զահլա տանում: Վաղը
նա ինձ ել է պետք: Ծառաս գնալու յե խոտի. յես ունեմ չոր-
սը, մեկ ել քոնը՝ հինգ ձի, հենց մի անգամից խոտը կբարձի ու
կբերի:
Դանել. Բագրատ ախպեր, ախր խիղճ արա: Հավաքած
փայտերս յեթե չբերեմ, կփչանան:
Բագրատ. Ի՛մ ինչ բանն է: Չին գրավ ես դրել, ել ին-
չի՞ մասին է խոսքդ:
Դանել. Բագրատ ախպեր, ահա յերկու ամիս իմ ձիով
աշխատում ես, գոնե դրա խաթրին կարող ես...
Բագրատ. Խոսքս խոսք է: Ասացի «չե», ուրեմն «չե»:
Դանել. Ուրեմն չե՞ս տա:
Բագրատ. Չեմ տա:
Դանել. Սպասիր դու, Բագրատ ախպեր, մի որ միտքդ
կբերեմ:
Բագրատ. Դու ի՞նչ, սպանում ես:
Դանել. Չեմ սպանում, այլ խոսում եմ: Դու կարծում
ես, վոր ես անտառում քեզ խելքի բերող չի՞ լինի: Կլինի... հի-
մա հին ժամանակը չի...
Բագրատ. Ա՛յ դու բոսյակ, դու համարձակվում ես ինձ,
Բագրատին սպանանալ... իմ արած բոլոր բարիքների համար...
(հեռանալով) Ա՛յ, եսպես է աշխարհքի բանը: Դե արի ու ես
տեսակ մարդկանց լավություն արա: Թ՛ն...
Դանել. Քանի՞ քանիսին խեղդած կլինես քո «լավու-
թյունով»:
Բագրատ. Դուրս, դուրս կորիր այստեղից: Յես քեզ
ցույց կտամ: Դու կիմանաս թե ով է Բագրատը:

Դ ա ն ե լ. Ի՞նչ չես վախեցնի... Հերիք ե վզերս ծոկնք: Եստեղ ե հասել (ցույց ե ցալիս կսկզբը): Մեր խելքը գլխներին ե յեկել: Մի որ թե դիպանք, վա՛յն ե յեկել քեզ... (գնում ե):

Բ ա գ ը ա տ. Ի՞նչ... սպառնում ե... ա՛խ դու սատանա: Դեհ, սրանից հետո գնա և մարդկանց բարությունն արա:

Ո գ ս ե ն. Բարությունը շուտով կմոռացվի, Բագրատ յեղբայր, մանավանդ հիմա: Մարդիկ ազատություն դտել են, թըքում են ամեն ինչի վրա:

Բ ա գ ը ա տ. Բայց իմ վրա թքել չեն կարող: Ա՛հ, հարամ-գաղա: Դե լավ, Բագրատը իրան կկարողանա պաշտպանել... (պառուզա) Դե, յեղբայրներ, շարունակենք, մի-մի հատ ել խըմենք ու պառկենք, արդեն ժամանակն ե. յես ցույց կտամ. թող իմանա իմ ով յեղածը... (խմում են):

Բ ա ը ս ե ղ (մոտենալով պատուհանին). Կարծես հանդարտում ե:

Բ ա գ ը ա տ. Ի՞նչն ե հանդարտում:

Բ ա ը ս ե ղ. Քամին:

Բ ա գ ը ա տ. Լավ ելի, թող հանդարտի... (վեր ե կենում) Դե հայրեր, պառկեցեք, սեղանը ձեզ բավական ե (հորանջում ե) յես ել գնամ պառկեմ:

Ո գ ս ե ն. Որհնյալ լինես: Մենք ել հիմա մեր ազոթքը կասենք, կպառկենք:

Բ ա գ ը ա տ. Սեղանի վրա պառկելը ձեզ մի քիչ անհարմար ե լինելու...

Բ ա ը ս ե ղ. Վոչինչ, մենք փափուկ անկողինների սովոր չենք:

Բ ա գ ը ա տ. Միթե... ա՛...ա՛... (հորանջում ե) դե լավ, քնեցեք (որովելով գնում ե վեր):

Ո գ ս ե ն (նայելով յեսվից). Ես հաստագլուկը վորտեղից ե իմացել քարերի մասին:

Բ ա ը ս ե ղ. Հաստագլու՛կ... եդ ո՛ւմ մասին ե:

Ո գ ս ե ն. Տանտիրոջ մասին: Ասում ե, թե քարերը մեզ մոտ են մնացել: Արդյոք Մաթոսը բան դուրս չի տվել:

Բ ա ը ս ե ղ. Ե՛հ, ի՞նչ ես ասում:

Ո գ ս ե ն. Շուտով պետք ե հասնել Մաթոսի մոտ, վերցնել նրանից բրիլյանտները և վերադառնալ հայր Յեղիազարի մոտ:

Բ ա ը ս ե ղ. Այո, հարկավոր ե շտապել, իսկ յեթե նա մեզ շտա այդ բրիլյանտները:

Ո գ ս ե ն. Խելքդ թոցրել ես ինչ ե: Ի՞նչպես կարող ե չըտալ, յերբ բանալին մեզ մոտ ե: Այստեղ նայիր (բաց ե անում կուրծք, վորտեղ նկարված ե խաչ յեվ Մ. յեվ Ա. ցառերը: Անդրեասը այդ նկատում ե, բայց տեսնելուց անտեսանում): Ահա քեզ բանալին, իմ կրծքին ե նկարված: Հսեցիր թե ինչ ասաց տեր Յեղիազարը, Մաթոսը վսր տեսնի այդ, անմիջապես կտա բրիլյանտները:

Բ ա ը ս ե ղ. Լուսաբացին կմեկնենք, իսկ հիմա չի խանգարիր մի քիչ ել խմենք: Ափսոս չի լավ բանը կորցնենք... (լըցնում ե, յերկուսն ել խմում են):

Ո գ ս ե ն. Տեր Յեղիազարը խելոք մարդ ե. «վորտեղ ես քարերը», «չկա» ու պրծավ... «Չկա»-ին ի՞նչ պիտի ասես: Դե մնացորդն ել նրա կենացը խմենք:

Բ ա ը ս ե ղ. Եդ ինչքան ել շտա ես խմում, տեր Ոգսեն, փորդ իսկական անտակ տակառ ե... (խմում են):

Ո գ ս ե ն. փփփորս... աստված ե որհնել:

Բ ա ը ս ե ղ. Եդ լավ ե:

Ո գ ս ե ն (նեղացած նայում ե դասարկ շեփն). Տոտեր Բարսեղ:

Բ ա ը ս ե ղ. Հա՛...

Ո գ ս ե ն. Սատանա յեմ տեսնում:

Բ ա ը ս ե ղ. Ի՞նչ սատանա, տեր մեղա քեզ...

Ո գ ս ե ն (հարբած). Ահա՛ նա... շի մեջ նստել ե, պոչն ե շարժում ու ծիծաղում ե... տեսնում ես...

Բ ա ը ս ե ղ. Սպասի տեսնում եմ, տեր Ոգսեն, սուրբ-սուրբ... սատանու ճուտ, ի՞նչպես ե մտել շի մեջ, ա՛...

Ո գ ս ե ն. Դու չես կարող մտնել, բայց սատանան կմտնի: Սպասիր, յես հիմի նրան... դուրս կգա: Տեր աստված, դու ոգնիր (բռունցքով խփում ե շեփն, վորն ընկնում ե գեթին):

Բ ա ը ս ե ղ. Դուրս յեկավ:

Ո գ ս ե ն. Կարծես, դուրս յեկավ... Չչչչե, նստել ե... ահա, ահա, տես, տես: Նրա կրծքի վրա յել գրված ե Մ. և Ա.:

Բ ա ը ս ե ղ. Կկկկմաց, կլսեն... ի՞նչպես կարելի յե սուրբ տառերը սատանու կրծքին ընկած լինեն:

Ո գ ս ե ն. Յես հիմա նրան կհարածեմ: Եդ սատանի ճուտը

ծիծաղում և իմ վրա, թե ինչ... առ քեզ (վոսով խիում և օր-
չին):

Բ ա ռ ս ե ղ. Տեր Ոգսեն, բոլորին զարթնեցնելու յես: Սա-
տանան դուրս յեկավ, հիմա կարող ենք պառկել քնել:

Ո գ ս ե ն (յերկարելով սեղանի վրա). Ահա տեսնում ես...
Ի՞նչ վոր մի անպիտան սատանա տերտերին և խաբէլ... Չե,
չես կարող:

Բ ա ռ ս ե ղ. Այդպես և (նույնպես յերկարում և սեղանի
վրա):

Ո գ ս ե ն. Ոհ... ոհ... ոհ... տեր աստված... (վորո՞ւ ժառան-
գակ փնթփնթում և, իսկ հետո սկսում և խուժիպ: Նույնպես
յե՛վ Բարսեղը: Անդրեասը յե՛վ Նիկոլը պառկած սեղից գուրս
են գալիս):

Ա ն դ ը ե ա ս. Լսեցի՞ր:

Ն ի կ ո լ. Մի՞թե այդ ճիշտ և:

Ա ն դ ը ե ա ս. Կարծում եմ, թե ճիշտ կլինի, դրանց մա-
սին մեզ Ռհանը պատմեց, չե՞:

Ն ի կ ո լ. Ուրեմն դրանք եղ հեքիմի մոտ են պահ տված, ի՞նչ-
պես եր նրա անունը... Մաթոս, թե...

Ա ն դ ը ե ա ս. Իսկապես վոր նրա մոտն են: Հարկավոր և
ես տերտերներին մի վոտք դնել:

Ն ի կ ո լ. Վհնց թե «վոտք դնել»:

Ա ն դ ը ե ա ս. Ո՛յ, ինչ չհասկացողն ես: Բրիլյանտները մեր
ձեռքը պետք և անցնեն, հասկացա՞ր:

Ն ի կ ո լ. Եղ դժվար բան և: Նրանք ինչ վոր բանալի ու-
նեն:

Ա ն դ ը ե ա ս. Դե ի՞նչ, քո կարծիքով պետութեան պատ-
կանող այդ թանգազին քարերը պետք և սևազուլսնէրին թող-
նենք:

Ն ի կ ո լ. Ապա ի՞նչ անենք...

Ա ն դ ը ե ա ս. Սպասիր դու, իսկ բանալու մասին հիմի
կիմանանք (վասեմում և Ոգսենի):

Ն ի կ ո լ. Կամաց...

Ա ն դ ը ե ա ս. Թնդանոթ ել արձակես, նրանք չեն լսի...
(բաց և անում Ոգսենի Քարաջան) Ահա, տես, խաչ և նրա վրա
յերկու տառ Մ. և Ա.:

Ն ի կ ո լ. Հետաքրքիր և ի՞նչ են նշանակում այդ յերկու-
տառերը:

Ա ն դ ը ե ա ս. Հետո կիմանանք:

Ն ի կ ո լ. Բանալին ունենք, բայց պիտի կարողանանք մի
բան անել: Չեմ կարծում, վոր այդ հեքիմը մեզ հավատա: Մի,
նայիր քեզ և ինձ, մեր յերկուսից ել կոմսոմոլի հոտն և փչում:
Այսպիսի զգեստներով ինչպէս կարող ենք գնալ:

Ա ն դ ը ե ա ս. Ի՞նչ ո՞վ և ասել, վոր այսպես պետք և ներ-
կայանանք հեքիմին:

Ն ի կ ո լ. Հապա ինչպէս (պառուզա):

Ա ն դ ը ե ա ս. Ինչպէս... սպասի, լավ միտքս յեկավ: Տեր-
տերների ֆարաջաները կվերցնենք: Նրանք քնած են, կարող
են այդպես պառկել: Հիմի կհանենք ֆարաջաները և գործը իր
կարգով կգնա:

Ն ի կ ո լ. Դու գժվել ես:

Ա ն դ ը ե ա ս. Կարծեմ, վնչ: Մի տես, թե ինչպես են հար-
բած, միևնույնն և, յեթե նույնիսկ գլխիվայր ել կախ տանք, ելի
չեն զարթնի:

Ն ի կ ո լ. Հարցը միայն ֆարաջաներում չի:

Ա ն դ ը ե ա ս. Բա ինչո՞ւնն և:

Ն ի կ ո լ. Դեմքն և կարևոր, ահա թե ինչ: Մի նայիր, մենք
նման ենք տերտերի:

Ա ն դ ը ե ա ս. Իսկապես, յես դրա մասին չմտածեցի...
բայց ջահել տերտերացույի տեղ կանցնենք:

Ն ի կ ո լ. Ջահելներին բրիլյանտների համար չեն ուղարկի
(պառուզա)

Ա ն դ ը ե ա ս. Ըհը, գտա...

Ն ի կ ո լ. Կամաց...

Ա ն դ ը ե ա ս. Ախր մենք պարիկներ ունենք:

Ն ի կ ո լ. Ճիշտ և. դու խելոք տղա յես: Ամեն ինչ բերեմ...
(վերեվից լսվում և ձայն):

Ա ն դ ը ե ա ս. Գալիս են, պահվիր:

Կ ի ն. Ե՛... Ե՛... Ե՛... Ե՛... բալիկս, ե ե ե ե... (Անդրեասին
չի նկատում, թողնում և յերեխան յե՛վ հագնում և մուսակը):

Ա ն դ ը ե ա ս. Դու ո՞ւր ես գնում գիշեր ժամանակ, մոր-
քուր:

Կ ի ն. Ախ, բալիկս, վախեցրիր ինձ... յերեխան շատ ան-

հանգիստ է, լաց է լինում, չի ծծում: Գնալու յեմ Մաթոսի մոտ: Ձեմ կարող նստել ու սպասել, սիրտս անհանգիստ է: Դրսում քամին հանդարտել է, աստուծո ուժով կհասնեմ... Բնացեք բարով (գնում ե):

Ն ի կ ո լ (գուրս գալով). Իսկ ես պառավը մեզ չի՞ խանգարելու:

Ա ն դ ը ե ա ս. Վոչ: Դե, շուտ արա, դեռ գնալու 4 վերստ ճանապարհ ունենք: Դու հանիր Բարսեղից, յես ել Ոգոսենից (մսեցնում են տերտերին, հանում են ճարագաները, նրանք մրավրում են, բայց չեն գարքնում): Ահա պատրաստ: Ահա քեզ քիմիական մատիտ, նկարիչ կուրծքիս բանալին (բաց է անում կուրծքը յեվ Նիկոլը նկարում է խաչ յեվ տառերը):

Ն ի կ ո լ. Ձնայած, վոր խաչը անաստված է նկարել, բայց շատ լավը դուրս յեկավ: Տառերն ել կանենք: Մ. և Ա.: Պատրաստ:

Ա ն դ ը ե ա ս. Վորտե՞ղ են պարիկները:

Ն ի կ ո լ. Ահա, այնտեղ են:

Ա ն դ ը ե ա ս. Յես քեզանից պառավ պետք է լինեմ, տուր ինձ ալեխառն պարիկը... (դնում են պարիկները յեվ մտումը) Շատ լավ: Յերկրորդ անգամն է հաղնում եմ նման զգեստ: Առաջին անգամ կոմսոմոլի ծնունդին ներկայացնում եյի վանականը, իսկ յերկրորդը՝ հիմա:

Ն ի կ ո լ (գլուխը դնելով փեղույրը). Ինչո՞վ եմ պակաս տերտերից:

Ա ն դ ը ե ա ս. Իսկ յես ի՞նչպես եմ, նման եմ:

Ն ի կ ո լ. Լավ ես, լավ:

Ա ն դ ը ե ա ս. Յեթե գործը չփչանա, եհ... եդ բրիլյանտներով ինչ չի կարելի անել... դպրոց, խրճիթ-ընթերցարան, դե, Նիկոլ գնանք... (գնում են):

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մաթոսի խրճիթը: Մեծ վառարան, յերկու դուռ: Անկյունում սրբերի մի շարք հնացած ու կեղտոտված պատկերներ: Պատերից կախված զանազան բույսերի փնջեր, փոքրիկ տոպրակներ, վողորենու ավելներ: Սեղանի առաջ նստած է Մաթոսը, մի կողմ և գոգված մազերով մոռյլ ծերունի, փոքրիկ սանդի (հավանի) մեջ ծեծում է մի ինչ վոր բան: Խրճիթում հետ ու առաջ է բայլում տեր Չատիկը:

Չ ա տ ի կ (եղյելով սպիտակ մուրուքը). Այո, կյանք... չըփտեմ ո՞ւր ենք գնում...

Մ ա թ ո ս. Դեպի անկում, ահա ուր ենք գնում:

Չ ա տ ի կ. Ճշմարիտ է: Կարծում եյի վոր այդ վարակը մեզ չի հասնելու, բայց, կարծես գալիս է: Յերկտասարդներին ել յեկեղեցում չես տեսնի:

Մ ա թ ո ս. Այո, միայն ծերուկներն են մեզ սիրտ տալիս:

Չ ա տ ի կ. Մի քանի տարի յել կանցնի, տես վոր յեկեղեցին ել կփակենք: Ծերերը կմեռնեն, իսկ շահելները անաստված են մեծանում:

Մ ա թ ո ս. Վոչ միայն ծերերը պիտի մեռնեն, այլ և բուրբուր... դեպի վերջն ենք գնում... դեպի անկում... Չգուցե եմ տեր Չատիկ, վոր մարդկանց քիչ է մնացել տարել: Արդեն մարդկային ցեղի բնաջնջումը սկսվել է: Առաջ պատերազմ, հետո տիֆ, տիֆից հետո սով, իսկ հիմա յել շումա յե գալիս ասում են, չումա... Շուտով մեզ ել կհասնե: Թո՞ղ, թող գա... Եդ լավ է: Մի գուցե մարդիկ վերջում խելքի գան, գղջան:

Չ ա տ ի կ. Չուման ի՞նչ է վոր, նա յերբ վոր է կգա, կհասնե, արի տես, վոր անհավատուլթյունը արդեն յեկել հասել է:

Մ ա թ ո ս. Այդ բոլորը աստված է ուղարկում:

Ձ ա տ ի կ. Դե դու յել Մ ա թ ո ս, անհավատությունն ել ե աստված ուղարկում:

Մ ա թ ո ս. Այո, աստծուց ե:

Ձ ա տ ի կ. Բա եղ ի՞նչպես կլինի:

Մ ա թ ո ս. Պարզապես, փորձության համար:

Ձ ա տ ի կ. Փորձության համար ես ասում:

Մ ա թ ո ս. Աստված ուզում ե իմանալ, թե մարդկանց մեջ հավատը ինչքան ե հաստատուն:

Ձ ա տ ի կ. Իսկ ըստ իս, այդ բոլորը սատանայից ե...

Մ ա թ ո ս. Այդպես ել լինելու յե: Աշխարհի վերջը, անեղ դատաստանը գալիս ե: Սով, բույրիկներ, անհավատություն, հիմա յել կոլխոզներ: Մեկը մյուսի հետևից ե հասնում:

Ձ ա տ ի կ. Դու սպասիր դատաստանի գալուն... Իսկ հիմա կյանքը անտանելի յե: Ա՛խ ինչքան դժվար ե ապրելը:

Մ ա թ ո ս. Շուտով, շուտով գալու յե...

Ձ ա տ ի կ. Առանց դրան ել մեր յեկամուտը մի բան չեր, հազիվ հաց ու աղի համար եր բավականանում, իսկ հիմա ա-վելի վատ յեղավ: Չգիտեմ թե ինչ ենք անելու, յեթե եսպես գնա:

Մ ա թ ո ս. Վերջը պետք ե սպասենք, վերջը:

Ձ ա տ ի կ. Վերջը վերջ կյանքն ել կյանք ե... (պառու-գա) Ուրիշները մի կերպ գործը գլուխ բերում են, իսկ յես հիվանդ, խարխուղ մարդ եմ: Մհա տեր Ալեքսանի յեկեղեցու աստվածամոր նկարը նորոգվել ե: Մի հին կեղտոտ նկար եր, մեր ել ժողովուրդը գալիս ե պատարագին, ի՞նչ տեսնեն նկարը բոլորովին նորացել ե: Կրակի նման փայլում ե: Ինչ վոր յուզով յեղել ե և անհ, հրաշքը պատրաստ:

Մ ա թ ո ս. Ե՛հ դու յել:

Ձ ա տ ի կ. Ամիս, ամիս ու կես, չորս կողմից ժողովուրդը թափվում եր նրա մոտ: Ինչքան փող նա սրկեց (ա՛խ ե քա-ռու): Իսկ տեր Կիրակոսը ավելի լավ բան ե հնարել: Հսելով տեր Ալեքսանի հրաշագործությունների մասին, նա տես թե ինչ ե մոկոնել: Նա յեկեղեցում, խորանի մոտ փրկչի պատ-կերն ե կախել, մեծ պատկեր. մեկ ել տեսնես փրկիչը լաց ե յեղել: Ժողովուրդը նայում ե և տեսնում, թե ինչպես փրկիչի աչքերից արցունքներ են հոսում:

Մ ա թ ո ս. Արցունքներ:

Ձ ա տ ի կ. Այսինքն, վոչ թե արցունքներ, այլ... ջուր: Հարկավոր տեղում, աչքերից Չ ծակ ե բաց արել իսկ հետե-վում հարմարացրել ե մի ամանով ջուր և այնպես սարքել, վոր ջուրը կաթիլ-կաթիլ դուրս ե թափվելիս յեղել: Իհարկե դրսից ջրի կաթիլները արցունքի նման են յերևում:

Մ ա թ ո ս. Դա սրիկայությունն ե: Աստծու ծառայողներն անգամ ծաղրում են նրան: Մոտ ե, մոտ ե աշխարհի վերջը:

Ձ ա տ ի կ. Սրիկայությունս վճռն ե: Մի կերպ ապրել հարկավոր ե: Հոմ տերտերն ել մարդ ե, մի՞թե նա ապրելու իրավունք չունի: Հա, յերբ տեր Ալեքսանը իմացել ե տեր Կի-րակոսի հրաշքի մասին, քիչ ե մնացել, վոր տրաքվի: Ժողո-վուրդը նրանից դեպի տեր Կիրակոսն ե վազել: Դա իհարկե վիրավորական ե... այո... (պառուգա): Կիրակոսը Չ ամիս իրա հրաշագործություններով ցատկրտել ե, իսկ յերբորդ ամսին նստացրել են:

Մ ա թ ո ս. Նստացրել են:

Ձ ա տ ի կ. Հա... բանտում նստացրել են... Դու յել գիտես, թե կրոնը ինչքան հալածանքի յենթակա յե... (պառուգա) Հիմա վտանգավոր ե թե չե կարելի յեր մի բան հնարել, մի հրաշա-գործություն սարքել:

Մ ա թ ո ս. Վոչ, տեր Ձատիկ, դու չպիտի անես, յեթե անես, յես դրա մասին բոլորին կպատմեմ: Յես թույլ չեմ տա, վոր աստծուն ծաղր ու ծանակ անեն, չեմ թույլ տա, վոր Բրիտանոսի անունով սրիկայություններ անեն:

Ձ ա տ ի կ. Չե, Մ ա թ ո ս, դա բարեկամություն չե: Յեթե մաքրության մասին խոսենք, յես ել կարող եմ մի բան պատ-մել քո բժշկության մասին: Մի՞թե դու մեղք չես գործում:

Մ ա թ ո ս. Յե՛ս: Յեթե յես մեղքեր եմ գործում, աստծուն գոնե իմ մեղքերին մասնակից չեմ անում, իսկ դու աստծու հետ խաբեբայություններ ես սարքում:

Ձ ա տ ի կ. Վոչ թե աստծո, այլ պատկերի, կոնի հետ:

Մ ա թ ո ս. Իսկ դու իմ մասին վոչինչ չասես:

Ձ ա տ ի կ. Ե՛հ դու յել, դե յես հանաք եմ անում, բժը-կիր, քո բժշկությունից, բացի լավությունից ինձ ուրիշ բան չկա: Ավելի շատ մեռել կթաղեմ... հա... հա... հա... (ծիծա-ղում ե): Ժամանակն ե տուն գնալու, խոսքի բռնվեցի, մնաս բարև:

Մ ա թ ո ս. Գնաս բարով: Գնանք, հետևիցդ դուռը փակեմ (գնում եմ, փչ հետս վերադառնում եմ: Ե՛հ դու յե՛լ... 15 տարի յե ոգավում եմ ես ժողովրդից, դժվար թե դու կարողանաս վտարի տակը փորել... (մտնում ե պատուհանին) Ի՞նչ մութն ե... մատդ մարդու աչքը կոխես՝ չի տեսնի (դուռը ծեծում եմ): Ո՛վ ե այսպիսի ժամանակ յեկողը... (գնում ե յեվ վերադառնում կնոջ հետ):

Կ ի ն. Ներիր, սիրելիս, մի քիչ տկարացել եր, լաց եր լինում, ծիծ չի բռնում, ստիպվեցի գիշերը դուրս գալ, ճանապարհին լռեց:

Մ ա թ ո ս. Մտիր տեսնենք, ի՞նչ ե պատահել նրան:

Կ ի ն. Չգիտեմ ախպեր, ահա չորս որ ե, վոր ամբողջ մարմինը կապույտ բծերով ծածկվել ե: Յես նրան տնային դեղեր արեցի, չոգնեց, հիմա յեվ քեզ բերեցի: Ոգնիր հողիս:

Մ ա թ ո ս. Լավ... լավ...

Կ ի ն. Ահա, սո... (սալիս ե փող):

Մ ա թ ո ս (վեցցնելով փողը). Տո՛ւր յերելսան տեսնեմ:

Կ ի ն. Սպասի բաց անեմ:

Մ ա թ ո ս. Հարկավոր չի բաց անել, այդպես մնա: Հա... բծեր ես ասում, հա... (առնում ե յերելսան):

Կ ի ն. Բծեր, ախպեր ջան, կոնակին եր, փորելիկն եր:

Մ ա թ ո ս. Ճչում ե:

Կ ի ն. Հա, ճչում ե, գիշեր ցերեկ ճչում ե:

Մ ա թ ո ս. Հա, հա...

Կ ի ն. Դեռ հիմա լռեց, յերելի քնել ե:

Մ ա թ ո ս. Գնա են կողմը և լուռ կաց (դնում ե յերելսան սեղանի վրա, գնում ե յեվ բերում մի սրվակ): Անուհն ի՞նչ ե:

Կ ի ն. Աննա յե, սիրելիս, Աննա:

Մ ա թ ո ս. Քոնը չեմ ասում, յերելսայի անուհը:

Կ ի ն. Յերելսայի՛նը... Ոհաննես:

Մ ա թ ո ս (վառելով ծծումբ). Իսկ հոր անուհը:

Կ ի ն. Կիրակոս (ծծումբից բարձրանում ե խիս յեվ թուլավոր ծուխ):

Մ ա թ ո ս (վեցցնելով յերելսան). Կարդա «հայր մեր»... Կ ի ն (արագ). Հայր մեր վոր յերկինս յես, սուրբ և այլն:

Մ ա թ ո ս. Քիչ հեռու կանգնի (յերելսային բռնում ե ծուխի վրա): Տեր վողորմյա... տեր վողորմյա... Կիրակոսի տանը

ցամլն ե մտել, փոքրիկ Ոհանի մեջ տեղ ե դառել, Ոհանի մարմնի վրա բծեր ե թողել: Ահ դու անգուլթ ցավ, դուրս յեկ Ոհանի միջից: Դուրս յեկ չողովում կամ վագով, զնա անտառ, սար ու ձոր, հեռացիր Կիրակոսի տնից: Մտիր թռչունի կամ գազանի մեջ, զնա վորտեղ ուղես, միայն ազատ թող մեզ: Իսկ Կիրակոսի տունն ու Ոհանի մարմնին չկպչես, չկպչես, չկպչես թյու... թքիր յերեք անգամ:

Կ ի ն. Թյու, թյու, թյու:

Մ ա թ ո ս. Հիմա յես մարմինը կյեղեմ ես դեղով և նրանից քեզ ել կտամ, վոր առավոտյան արևածագին և մեկ ել մայրամուտին յեղես: Հասկացար:

Կ ի ն. Հասկացա, հողիս, հասկացա:

Մ ա թ ո ս. Բռնիր յերելսային, զնամ դեղը բերեմ (գնում ե յեվ վերադառնում ե դեղով, առնում ե յերելսային յեվ բաց անում):

Կ ի ն. Յերելի քնել ե:

Մ ա թ ո ս. Նա մեռել ե:

Կ ի ն. Իի՛նչ... Մ ա թ ո ս. Մեռած ե...

Կ ի ն (մի առ ժամանակ ֆարցած կսնգնած ե. հետս հչալով ընկնում ե ծունկի վրա). Անուշիկ բալիկս, խեղճ գափակս, բաց արա քո գեղեցիկ աչուկները և տես քո մորը, Վանիկ ջան, թոչնիկս սում ես ինձ անմխիթար թողնում, եդ ի՞նչ բան եր իմ գլխին յեկավ... ահ... ահ...

Մ ա թ ո ս (ծոճալը փեղում). Ե՛հ, ձախորդություն:

Կ ի ն. Ե՛ս ի՞նչ բան ե, հա:

Մ ա թ ո ս. «Ե՛ս ինչ ե», «ես ինչ ե»: Դե, դու նրան մեռած բերեցիր ինձ մտա: Յես ել մեռելին հիվանդությունից ազատում ելի:

Կ ի ն. Բա ինչպես կլինի եդ, նա ամբողջ գիշեր լաց եր լինում:

Մ ա թ ո ս. Դրանից ի՞նչ. լաց ե յեղել, լաց ե յեղել, հետս մեռել:

Կ ի ն. Բա յես հիմա ի՞նչ անեմ:

Մ ա թ ո ս. Ի՞նչ պիտի անես, պետք ե տուն գնաս և թաղման պատրաստվես:

Կ ի ն. Թաղման, միթե Վանիկս մեռավ:

Մ ա թ ո ս. Իհարկե մեռավ, չես տեսնում վոր սառել ե:

Կ ի ն. Սառել է... (նորից նեղվելով յերեխայի վրա, լալով)
Մի հատիկ զավակս, խեղճ զավակս, Վանիկ, Վանիկ ջան, բա-
լիկ ջան, հոգուդ մատաղ...

Մ ա թ ո ս. Բավական է: Լացով ու արցունքով հետ չես
դարձնի: Աստված է տվել, աստված էլ առել է: Նրա կամքին
հակառակ չես կարող գնալ. եղպես ե, քույրիկ:

Կ ի ն. Չորս որ տառապեց խեղճը:
Մ ա թ ո ս. Դու ինքդ ես մեղավորը: Յերեք որ քո դեղե-
րով ես բժշկել և չորորդ որն է միտքդ յեկել ինձ մոտ բերելու:
Ա՛յ, կնիկ:

Կ ի ն. Ո՛հ, վոտներս թուլանում են, զնայու ուժ չունեմ:
Մ ա թ ո ս. Աստծո ուժովը կհասնես տուն:
Կ ի ն. Գուցե դու ես հիվանդութունից չկախարդեցիր նը-
րան, դրա համար նա...

Մ ա թ ո ս. Ի՛նչ, ինձ սովորեցնել ես ուզում, դատարկ
զրուխ: 15 տարի յե մարդկանց բժշկում եմ, այդպիսի բաներ
ես խոսում:

Կ ի ն. Ներիր, սիրելիս, խելքս կորցրել եմ:
Մ ա թ ո ս. Հն... հն...
Կ ի ն. Ո՛հ... մնաս բարով... (գնում է):

Մ ա թ ո ս (վորո՞ ժամանակ լուռ կանգնած). Ե՛հ խաթա-
բալա... (զուռը ձեռում են) Ես ի՛նչ գիշեր ե, մարդիկ ուղղա-
կի կատարել են (գնում դուրս յեվ վերադառնում է «փահա-
նա» կոմսոմոլիսների հետ):

Ա. ն դ. բ. ա. ս. Վողջույն, որհնված:
Ն ի կ ո լ. Տերն մեր աստված տանտիրոջ ուժ և առող-
ջություն պարգևեսցե...

Մ ա թ ո ս. Բարի յեկաք հայրեր... անցեք այստեղ...
Ա. ն դ. բ. ա. ս (նստելով քախսի վրա). Ո՛հ, հազիվ-հազ յե-
կանք: Հոգիներս դուրս յեկավ:

Մ ա թ ո ս. Սատանայի յեղանակ է. տեր, փրկյա ի չարե:
Ն ի կ ո լ. Մինչև հասանք, մեռանք, մեռանք:
Ա. ն դ. բ. ա. ս. Մաթոս ախպեր, տեր Յեղիազարից քեզ բա-
րենքը ենք բերել... (վեր է կենում յեվ խոնարհվում):

Մ ա թ ո ս. Տեր Յեղիազարից, սուրբ Հակոբի վանահայրից:
Ն ի կ ո լ. Այո, այո, հենց նրանից:
Մ ա թ ո ս (անտեղի վազվզում է սենյակում). Ի՛նչ ուրա-
խություն: Իսկ յես կարծում եյի, թե նա ինձ բուրբովին մո-

ուացել է: Տեսնում եմ, չէ... հիշում ե: Շնորհակալ եմ, շատ
շնորհակալ եմ: Սիրելի հյուրեր, հանվեցեք, ելի: Յես հիմա ինք-
նայեռը կսարքեմ, թեյ խմենք:

Ա. ն դ. բ. ա. ս. Մի անհանգստանա, Մաթոս յեղբայր. յեր-
կար չենք մնալու, շտապում ենք:
Մ ա թ ո ս. Եդ ի՛նչ բան է, նոր յեկաք և արդեն շտապում
եք գնալու: Յերևի հեռվից եք յեկել:

Ա. ն դ. բ. ա. ս. Քաղաքից:
Մ ա թ ո ս. Քաղաքից: Տեր Յեղիազարը քաղաքումն է ապ-
րում:
Ա. ն դ. բ. ա. ս. Քաղաքում: Մեզ վանքից վանդեցին չէ:
Մ ա թ ո ս. Գիտեմ, գիտեմ:

Ն ի կ ո լ. Հիմա վանքում անվարտիկ յերեխեքն են ապ-
րում:
Մ ա թ ո ս. Ինչպիսի շարժարանքներ: Դեպի վերջն ենք
գնում, վերջը: Մոտ է անեղ դատաստանի որը:

Ն ի կ ո լ. Ավետարանում ասված է. «աշխարհի անեղ դա-
տաստանից առաջ գալու յե նեռը», նեռը յեկել է և մեկ չի,
այլ հաղարներ են յեկել:

Ա. ն դ. բ. ա. ս. Նրանց անունն էլ «բողջիկ» է:
Ն ի կ ո լ. Որ ըստ որե նրանք շատանում են: Կարծես մին-
չև աշխարհի դատաստանի որը բոլոր մարդիկ անաստվածներ
են դառնալու: Մեղա քեզ տեր, մեղա:

Մ ա թ ո ս. Ա՛հ, տեր աստված, մեծ է քո զայրույթը:
Ա. ն դ. բ. ա. ս. Իսկապես եղպես է: Իսկ մենք տեր Յեղիա-
զարից քեզ մոտ գործով ենք յեկել:

Մ ա թ ո ս. Տեր Յեղիազարի համար յես ամեն ինչի պատ-
րաստ եմ:
Ա. ն դ. բ. ա. ս. Մենք քեզ մոտ յեկել ենք, նրա Չ տարի
առաջ քեզ մոտ թողած իրերի համար, հիշում ես:

Մ ա թ ո ս. Ի՛նչ, ինչպիսի իրերի համար:
Ա. ն դ. բ. ա. ս. Քեզ մոտ թողել է, վորպեսզի լավ պահես:

Մ ա թ ո ս. Պահելու համար: Չեմ հիշում: Կարծես, թե
այդպիսի բան չեմ հիշում: Նա ինձ վոչինչ չի տվել պահելու
համար: Վերջին անգամ, յերբ նրան տեսա, նա ինձ տվեց...
Ն ի կ ո լ. Հն... հն... եդ...
Մ ա թ ո ս. Որհնություն և ուրիշ վոչինչ:

Ան դր ե ա ս. Ձե, Մաթոս յեղբայր. բանը դրանում չե...

Մ ա թ ո ս. Ձեմ հասկանում ի՞նչ է ձեզ հարկավոր:

Ան դր ե ա ս. Թանգարժեք քարերը...

Մ ա թ ո ս. Քբքբարե՞ր: Ի՞նչ քարեր: Ձեմ հասկանում ի՞նչ քարերի մասին եք խոսում: Եստեղ ի՞նչ վոր մի սխալ բան կա:

Ան դր ե ա ս. Մենք եղ քարերի համար բանալի ել ունենք:

Մ ա թ ո ս. Բանալի: Ձեր խոսքերից վոչինչ չեմ հասկա-

նում: Անդրեաս (կուրծք բաց անելով). Ահա, գիտե՞ս ես ինչ է:

Մ ա թ ո ս. Գզգզիտեմ...

Ան դր ե ա ս. Ասա ես ի՞նչ է գրված:

Մ ա թ ո ս. «Մեծն աստված», ահա թե ինչ:

Ան դր ե ա ս. Հենց եղ է:

Մ ա թ ո ս. Ներեցեք ինձ, ծերուկիս, հայրեր: Դուք ճշմարիտ եք: 2 տարի առաջ տեր Յեղիազարի հետ պայմանավորվել էյինք, թե ով վոր գա նրանից, պետք է այդ յերկու Մ. և Ա. — «Մեծն աստված» տառերը և խաչը նկարված լինեն նրա կրծքին:

Ան դր ե ա ս. Այդ մենք գիտեյինք, յեղբայր, միայն ասա, դու ինչո՞ւ եյիր ուրանում:

Մ ա թ ո ս. Դե դուք ինքներդ ել գիտեք, հայրեր, ինչպիսի ժամանակներում ենք ապրում: Մեկ ել տեսնես...

Ան դր ե ա ս. Եղ լավ է, Մաթոս յեղբայր, հիմա մարդկանց խոսքին հավատալ չի կարելի:

Մ ա թ ո ս. Հա, հա, հենց յես ել դրա մասին եմ խոսում:

Անդրեաս. Ահա, մենք, հենց եղ քարերի համար ենք յեկել: Բոլորը կան, չե:

Մ ա թ ո ս. Դե, հայրեր, դուք ինձ ո՞ւմ տեղ եք գրել: Յես 2 տարուց ավելի աչքիս լույսի պես դրանք պահել եմ:

Ն ի կ ո լ (խոնարհելով). Շնորհակալ ենք, Մաթոս յեղբայր, տեր Յեղիազարը այդ ծառայութեանդ համար քեզ շնորհակալ կլինի: Որհնյալ լինես:

Մ ա թ ո ս. Ինձ շնորհակալութունը հարկավոր չի, միայն թող տեր Յեղիազարը իր աղոթքների մեջ ինձ, մեղավորիս, հիշի:

Ան դր ե ա ս. Մենք ել, նա յեր, միշտ աղոթում ենք քեզ համար, Մաթոս յեղբայր:

Մ ա թ ո ս. Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, հիմա կտամ ձեզ ձեր քարերը (զնուվ ե):

Ան դր ե ա ս. Վճնց ես:

Ն ի կ ո լ. Հրաշալի...

Ան դր ե ա ս. Իսկ յես, ճիշտ ասած, վախեցա, յերբ սկսեց ուրանալ քարերի գոյութունը, դե, ասում եյի, մեր գործը շուրն ընկավ:

Ն ի կ ո լ. Խորամանկ աղվես է հա...

Ան դր ե ա ս. Իհարկե, հիմար հավատացյալներին 15 տարի յե խաբում է. յեթե դատարկ գլխով լիներ, վաղուց առանց գլխի կմնար:

Ն ի կ ո լ (ղիսում է պատեր). Տես, տես, պատերին ինչքան հիմարութուններ է կախել:

Ան դր ե ա ս. Դեղատուն է, ախպեր, դեղատուն:

Ն ի կ ո լ. Ինչքան շատ են մեզանում եսպիսի դեղատուները:

Ան դր ե ա ս. Ես դեղատուն չի, այլ գերեզմանատուն: Յեթե մեզանում լինեյին այնքան բժիշկներ, ինչքան կան կախարդ հեքիմներ...

Ն ի կ ո լ: Մի քիչ ել սպասի, դեղատներ ել կլինեն, բըժիշկներ ել: Ձեա տեսնում վերջերս ինչքան շանք է թափում մեր կառավարութունը այդ ուղղութամբ (Մուր ձեռքին մքսնում է Մաթոսը):

Մ ա թ ո ս. Հիմա կհանեմ քարերը (վառում է մուր յեվ մարում է լամպը, հանում է մեքենան յեվ նավթ յցնում բաժակի մեջ: Կոմսոսյները նայում են հետաքրքրյալք: Նավթի նե սիասին ընկնում են բաժակի մեջ նաեվ ֆաբեր): Ահա ձեր քարերը (հանում է բաժակից):

Ան դր ե ա ս. Ինչ լավ տեղ ես պահել: Վոչ վոք չի կասկածի, թե այնտեղ բրիլիանտներ են պահված:

Մ ա թ ո ս. Շատ հարմար տեղ. վոչ գողերի և վոչ ել բողջիկների մտքովն անգամ չեր անցնի նրանց տեղը գտնել: Ահա, 12 հատ քար: Ե՛հ վոնց են փայլում—վառվառում են:

Ան դր ե ա ս (փաթաթելով քղթի մեջ). Դե, բո ծառայութունը տեր Յեղիազարը չի մոռանա:

Մ ա թ ո ս. Յես նրա համար ամեն ինչի պատրաստ եմ: Վողջույններս տվեք նրան:

Ան դ ր ե ա ս. կտանք, անպայման: Հն, համեմայն դեպս, մենք քեզ նրա հասցեն կթողնենք: Յերբ քաղաք գալու լինես, անպայման կհանդիպես: Տեր Յեղիազարը շատ ուրախ կլինի: (Հանում է գրպանից բաղթ յեվ մասիս, գրում է յեվ Տաթուհի):

Մ ա թ ո ս. Շնորհակալ եմ, տեր հայր:

Ն ի կ ու լ. Իսկ քո գործերը ինչպէս են գնում, Մաթոս յեղբայր:

Մ ա թ ո ս. Աստու կամքով, վոչինչ, գանդատովել չի կարելի, ամբողջ գավառը յես եմ բժշկում, մարդիկ ինձ չեն մոռանում:

Ան դ ր ե ա ս. Դե, իհարկե, ինչքան մարդ ես սատկացրել... թյո՛ւ... բժշկել:

Մ ա թ ո ս, Աստված ոգնում է (պատուգա):

Ան դ ր ե ա ս: Դե, գնանք, տեր Փիլիպպոս:

Մ ա թ ո ս. Գուցե մի մի բաժակ թեյ խմեյինք:

Ան դ ր ե ա ս. Չե, չե, շատ շնորհակալ ենք: Մեկնելու ժամանակն է, մնացեք բարով:

Մ ա թ ո ս. Դե, ինչ արած... գնացեք բարով (կոմսոմոյիսները գնում են: Մաթոսը նանապարհ է դնում յեվ վերադառնում: Մոտենում է պատուհանին, քիչ հետո հանում է բուրդը յեվ կարդում: Թուխը գետն է ընկնում: Գլուխը բռնելով, ընկնում է քախքի վրա): Անաստվածներ, խաբեցին ինձ, հրեշի գավակներ, ա՛հ... ա՛հ... (գոռայով փախչում է գուրս):

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1 գործողութիւն տեսարանը: Լուսարայ: Տեր Բարսեղը քնել է սեղանի վրա, իսկ Ոգանը փոված է գետնի վրա: Վորոշ ժամանակ խորը լուռութուն, վորն յերբեմն խանգարվում է վանահայրերի խոմփոցից: Դուրսը աքաղաղները կանչում են):

Ո գ ս ե ն (հարանջելով). Ա-ա... ոո... տեր աստված, տեր պատված, թյո՛ւ... (նստում է յեվ վորոշ ժամանակ ապեած նայում է շուրջը): Հըմ... կարծես, սեղանի վրա եյի պտակել, իսկ հատակում գարթեցի, պատմությո՛ւն... թյո՛ւ... (նայում է դեռ խովաացող Բարսեղի վրա): Տեր Բարսեղ (Բարսեղը ինչ վոր մոմում է յեվ մյուս կողմն է շուր գալիս): Ե՛հ, դու յել... կծկվում է դեռ... տեր Բարսեղ...
Բ ա Ր ս ե ղ. Հը՛... հա՛:
Ո գ ս ե ն. Դե, գարթեիր:

Բ ա Ր ս ե ղ. Ի՞նչ:
Ո գ ս ե ն (դժվարությամբ վեր կենայով հասակից), Դու, յեղբայր, քնել ես և Ֆարաշադ ել կորցրել:
Բ ա Ր ս ե ղ (դառնայով). Ի՞նչ Ֆարաշա... ո՛հ ս՛հ... արդեն լուսացել է (քից յեկար սուրոց է թողնում):

Ո գ ս ե ն. Դե, վերջապես, գարթիր, տեր Բարսեղ (քափ տալով նրան) վորտեղ է Ֆարաշադ:
Բ ա Ր ս ե ղ. Թյո՛ւ, ի՛նչ ես կպել ճանճի նման, ի՛նչ ֆարաշա:

Ո գ ս ե ն. Ի՛նչ ֆարաշան, տհա թե ինչ:
Բ ա Ր ս ե ղ (վեր կենայով). Իսկ քո՞նք վորտեղ ե:
Ո գ ս ե ն. Ի՛մը (նայում է իր վրա յեվ հետո Ոգանին): Յա՛... ես ի՛նչ բան ե: Սատանի փորձություն: Հանուն հոր և վորդի...
Բ ա Ր ս ե ղ. Գուցե և փորձություն լինի, չգիտեմ:

Ո գ ս ե ն. Զարմանալի բան... վճռտեղ են մտել:
Բ ա ռ ս ե դ. Ո՞վ:
Ո գ ս ե ն. Թյո՛ւ, ֆարաջան ելի, ո՞վ:
Բ ա ռ ս ե դ. Իսկապես, վճռտեղ կարող են լինել (յուռ ի-
րար են նայում յե՛վ ծոճրակները ֆորում):
Ո գ ս ե ն. Գուցե սեղանի տակ են ընկել (փնտրում են սե-
ղանի տակ):
Բ ա ռ ս ե դ. Կունակիցդ ընկել ու սեղանի տակ ե պահվել,
ի՞նչ ե:
Ո գ ս ե ն, Ինչո՞ւ չի կարելի, յես ել սեղանի վրա եյի պառ-
կել, բայց հատակի վրա դարթնեցի: Հո սատանան չի տարել:
Բ ա ռ ս ե դ. Թյո՛ւ, պղծության անունը մի հիշիր:
Ո գ ս ե ն (մի անկյունից մյուսը վազվզելով). Վո՛չ, սա-
տանան գիտե, թե ինչ ե: Բայց վերջապես վճռտեղ են մեր
ֆարաջաները:
Բ ա ռ ս ե դ. Բա յես վորտեղից իմանամ:
Ո գ ս ե ն. Բա վոր չգիտես, լեզուդ կո՛ւլ տուր, սո՛ւս կաց
(պառուզա): Լսի՛ր, տեր Բարսեղ (մոտենալով նրան):
Բ ա ռ ս ե դ. Ի՞նչ ե:
Ո գ ս ե ն (ցածր). Իմ կարծիքով, մեզ պարզապես կողոպ-
տել են:
Ո գ ս ե ն. Ի՞նչպես թե կողոպտել են:
Ո գ ս ե ն. Տեր Բարսեղ, նայում եմ քեզ և ուղղակի զար-
մանում եմ: Պառավությունից մազերդ թափվել են գլխիցդ,
իսկ դու յերեխայի նման մխամիտ ես... սարսաղ:
Բ ա ռ ս ե դ. Իսկ դու ի՞նչ ե կապված շան նման հաջում
ես: Փարաջադ տարել են, իսկ մեղավորը յե՞ս եմ:
Ո գ ս ե ն. Իսկ դու չե՞ս կորցրել:
Բ ա ռ ս ե դ. Իրա համար ել յես լուռ եմ:
Ո գ ս ե ն: Հարկավոր ե վո՛չ թե լուռ, այլ փնտրել:
Բ ա ռ ս ե դ. Փնտրի՛ր, ելի, ի՞նչ ես կանգնել, գուցե գըր-
պանդ ե մտել:
Ո գ ս ե ն. Տեր Բարսեղ, ինձ համբերությունից մի հանիր:
Խո՛մ գիտես բարկության ժամանակ յես սարսափելի յե՛մ դառ-
նում:
Բ ա ռ ս ե դ. Ըն՛ը, ուշացել ես: Թե համբերությունից դուրս
գաս ելի կհանգստանաս: Ի՞նչ ե, յերեխա՞ յես վախեցնում:

Ո գ ս ե ն. Քեղ ցույց կտամ: Դու ինձ առաջին անգամ ես
տեսնում: Գիտես մի որ տեր Մեսրոպը ինձ այնպես կատա-
ղեցրեց, վոր մի անգամից մորուքի կեսը պոկեցի. տես նրա
որին չհասնես:

Բ ա ռ ս ե դ (ծաղրելով). Հա՛... դիտեմ, կես մորուքը, իսկ
դու յել նրանից փախար սեղանի տակ մտար...

Ո գ ս ե ն. Լսի՛ր, թե չե՛ս...

Բ ա ռ ս ե դ. Դե՛, դե՛... ձայնդ շատ մի բարձրացնիր, լավ
իմացիր, վանքում չես (վորո՞ւ ժամանակ յուռ են):

Ո գ ս ե ն. Լսի՛ր, տեր Բարսեղ, արդյոք մեկը մեզանից ֆա-
րաջաները չի հանել:

Բ ա ռ ս ե դ. Ի՞նչպես:

Ո գ ս ե ն. Նո՛ւ, այնպես, ինչպես վոր հանում են: Դե մենք
յերեկ, մեղավորներս այնպես եյինք դգվել, վոր յեթե մեզ մեր-
կացնեյին, ելի չեյինք իմանա:

Բ ա ռ ս ե դ. Ո՛ւմ են հարկավոր մեր ֆարաջաները:

Ո գ ս ե ն. Ում վոր ուզես: Նրանցից յուրեկա յել, վարտիկ
ել կարելի յե անել:

Բ ա ռ ս ե դ. Ուրեմն, քո կարծիքով մեր ֆարաջաները գո-
ղացել են:

Ո գ ս ե ն. Վերջապես հասկացար:

Բ ա ռ ս ե դ. Հըմ... իսկ ո՞վ կարող ե գողացած լինել:

Ո գ ս ե ն. Ո՞վ: Իմ կարծիքով, տանտերը, նա յերեկ միշտ
նրանց վրա յեր նայում: Ճանապարհին ինձ հարցնում եր «տա՛ք
ե ես բանը», այսինքն ֆարաջան: Յես եդ անմիջապես հաս-
կացա: Ինձ խաբելը դժվար ե:

Բ ա ռ ս ե դ. Ա՛խ անգգամ սրիկա... տխ դու խո՞ղ... Նրա
բուռնցքն ել իսկական ավազակային ե:

Ո գ ս ե ն. Լավ մարդը իջևան չի պահի... նա յերեկ մեզ
դիտմամբ եր խմացնում (վերնահարկից հազի ձայն ե գալիս)
անա, նա յել գալիս և: Մենք հիմա նրան ցույց կտանք: Ախ-
պեր, դու տերտերներին չես կարող խաբել (մտնում ե Բագ-
րասր, աչքերը ֆնից ուռած, մազերն ու մորուքը խնկված):

Բ ա գ ը ա տ. Բարի լույս, տեր հայրեր:

Ո գ ս ե ն (կտրուկ). Բարի լույս:

Բ ա գ ը ա տ. Ե՛հ յես ել լավ եյի կոնծել հա՛... Իսկ հիմա
գլուխս տրաքվում ե, աչքերս գնում-դալիս են (հուրանելով)

հետո՛ւ է քախքի վրա): Ո - ո - ա - ա... լավ կլինի մի ժամ ել
քննմ: Իսկ դուք ի՞նչ ե եղպես հանվել եք, թե չե յերեկվանից
հետո շոգը զոռել ե:

Ո գ ս ե ն. Մենք չեյինք հանվի, յեթե մեզ չհանվեցնեյին:

Բ ա գ ը ա տ. Այսինքն, ինչպես թե ձեզ հանվեցրել են:

Ո գ ս ե ն. Ի՞նչպես են տկորացնում, Փարաջաները հանել
են ելի:

Բ ա գ ը ա տ. Հա... հա... հա... Փարաջաները հանել են, այ
զարմանալի մարդիկ:

Ո գ ս ե ն. Այստեղ ծիծաղելու վոչինչ չկա...

Բ ա ը ս ե դ. Այո, այո, վոչինչ չկա...

Ո գ ս ե ն. Այստեղ, կարելի յե ասել...

Բ ա գ ը ա տ (ընդմիջելով). Բա վո՞նց չծիծաղես, յերբ հա-
նել են Փարաջաները և չեք իմացել: Ո՞վ ե արել այդ խորա-
մանկուլթյունը:

Ո գ ս ե ն. Դու իհարկե, մեզանից լավ զիտես, թե ով ե
արել:

Բ ա գ ը ա տ (զարմացած). Յես:

Բ ա ը ս ե դ. Այո, այո, դու:

Բ ա գ ը ա տ. Յես վո՞րտեղից իմանամ, տեր հայր, յերբ
Փարաջաները ձեր կոնակին են յեղել:

Ո գ ս ե ն (հազարուց հետո). Ավելի լավ ե պարզ խոսենք:
Դու յես մեր Փարաջաները տարել:

Բ ա գ ը ա տ. Դուք, ի՞նչ ե, խելագարվել եք, թե՞ յերեկ-
վանից դեռ հարբած եք:

Ո գ ս ե ն. Դու մեզ հեքյաթ մի պատմի, մենք քո կար-
ծած թռչուններից չենք: Հետ տուր մեր Փարաջաները, թե չե
իշխանության կղիմենք. այո իշխանության:

Բ ա գ ը ա տ. Եդ ի՞նչ ե, դուք լուրջ եք խոսում, թե հա-
նար անում:

Ո գ ս ե ն. Բա ի՞նչ եյիր կարծում, հանաք ենք անում:

Բ ա գ ը ա տ. Ահ դուք յերկարամազ շներ, իմ ինչի՞ն են
պետք յեղել ձեր այդ ձիու տապալակները: Լիք սնդուկներ ու-
նեմ յես: Յես ձեզ միասին ունեցած չլիսի կարող եմ փաթա-
թել, այո, յես, յես:

Բ ա ը ս ե դ. Բա, ո՞վ ե ուրեմն մեր Փարաջաները տարել:

Բ ա գ ը ա տ. Մարթն, Մարթն, արի՛ այստեղ:

Մ ա ը թ ա (վերեվից, կամ դրսից). Ի՞նչ:

Բ ա գ ը ա տ. Արի՛ այստեղ (գալիս ե Մարթան): Մի տե՛ս
ես հարբածներին: Քնել և իրենց Փարաջաները կորցրել են,
հիմա յել ասում են, թե յես եմ նրանց կողոպտել, հա՛:

Մ ա ը թ ա. Ի՞նչ եք ասում, տեր հայր, խելքներդ գլխնե-
րիդ ե, թե վոչ: Սրանից հետո ո՞ւր քնաց ձեր ամոթը:

Բ ա գ ը ա տ. Նրանց մոտ յերբ ե յեղել, վոր հիմա լինի
ամոթը:

Ո գ ս ե ն. Դու մեր պատվին ձեռք մի տան, անասաված,
անսրեն:

Մ ա ը թ ա. Մի տե՛ս, մենք նրանց վորպես լավ մարդիկ
ենք հյուրընկալել իսկ նրանք ինչեր են խոսում:

Բ ա գ ը ա տ. Սպասիր, յես ինքս նրանց հետ կխոսեմ:

Ո գ ս ե ն. Մենք խոսելու բան չունենք:

Մ ա ը թ ա. Իրենք ել վանահայրերն ել սրանից հետո...

Բ ա գ ը ա տ. Ի՞նչ ես զանա տանում, քամու տոպրակ,
զնա քո տեղը:

Մ ա ը թ ա (զնալով). Ուհ, Փարաջան դողացել են:

Բ ա գ ը ա տ. Իսկ դուք, սևազուլներ, ուղ յեղեք այստե-
ղից: Սրանից հետո ել իմ տանը տեղ չունեք: Մարջ, անա ձեզ
ասաված և անա դուան շեմքը:

Բ ա ը ս ե դ. Բա ես ցրաին, եսպես մերկ ո՞ւր ենք գնալու
մենք:

Բ ա գ ը ա տ. Յես թքել եմ ձեր ել, ցրտի յել վրան: Քանի
վոր ձեր կարծիքով յես զող եմ, կորեք իմ տնիցը:

Ո գ ս ե ն. Ներեցեք, Բագրատ յեղբայր, այսպես չի կա-
րելի, նու, ինչ արած, մի քիչ տաքացել եյինք...

Բ ա գ ը ա տ. Տաքացել եյիք, դե հիմի յել գնացեք ցրտին
զովացեք (հրով ե):

Ո գ ս ե ն. Բագրատ յեղբայր, թույլ տուր մի խոսք ասեմ...

Բ ա գ ը ա տ. Նո՛ւ:

Ո գ ս ե ն. Յեթե մենք սխալ ենք արտահայտվել, դու յել
ներիր: Արի՛ մարդավարի խոսենք, հասկանանք իրար: Վերջ
ի վերջո Փարաջաները կորան:

Բ ա գ ը ա տ. Բա յես ինչով եմ մեղավոր: Իմ ինչի՞ն են
պետք ձեր Փարաջաները, հո տերտեր դառնալու միտք չունեմ:

Ո գ ս ե ն. Գուցե քո բատրակը տարած լինի:

Բ ա գ ը ա տ. Իմ բատրանկը: Յես հիմա նրան կկանչեմ:
Ոհան, Ոհան...

Մ ա ը թ ա (վերելից): Ձկա, յես ել եմ նրան փնտրել,
կարծես գետնի տակն ե մտել:

Բ ա գ ը ա տ. Հը՛մ... արդյոք ուր ե գնացել:

Բ ա ը ս ե ղ. Տեսնում ես, քաշել ե մեղանից ֆարաջաները
և ճղել արանքը:

Բ ա գ ը ա տ. Ուր կարող ե նա փախչել, նրա ընտանիքը
ես մոտիկ գյուղում ե ապրում:

Ո գ ս ե ն. Նա, անպայման, աստված վկա, նա յե տարել
մեր ֆարաջաները:

Բ ա գ ը ա տ. Սպասեցեք, յերբ գա, այն ժամանակ կիմա-
նանք:

Բ ա ը ս ե ղ. Ավազակ, դրա համար նրան սատկացնել ե
հարկավոր, այդ անիծյալին:

Բ ա գ ը ա տ. Ե՛ր ձեր խոսքերի համար արժեր ձեզ ես
ցրտին զուրս քշել, բայց, դե՛ լավ, մնացեք, սպասեցեք բա-
րակին. անի զուրք գողգոված, ֆարաջա կորցրած տերտերներ:

Ո գ ս ե ն. Մեղք ում հետ չի պատահում (Բագրատը զը-
նում ե):

Բ ա ը ս ե ղ. Ահ, տեր աստված, ես ինչ դժբախտություն ե:
Ո գ ս ե ն. Յե՛վ միշտ զուր յես պատճառը, տեր Բարսեղ.
Խմենք հա խմենք. դե՛, լավ խմեցինք:

Բ ա ը ս ե ղ. Իհարկե, յես եմ մեղավոր: Չուով բերանդ
ողի լցնեն ու մի՛ խմի:

Ո գ ս ե ն. Յեթե ես դժբաղդությունը դարնանը պատա-
հեր, ելի վոչինչ...

Բ ա ը ս ե ղ. Շատ լավն ենք: Տեր Յեղիազարը մեզ վոր-
պես կարգին մարդիկ ուղարկեց, իսկ մենք, .. հիմա ի՛նչպես
գնանք Մաթոսի մոտ:

Ո գ ս ե ն. Գուցե տանտիրոջ մոտ մի գգեստ գտնվի:

Բ ա ը ս ե ղ. Նրա մոտ հասարակ գգեստով գնալ չի կարելի,
նա չի հավատա մեզ:

Ո գ ս ե ն. Բայց բանալին մեզ մոտ ե, չե՛:

Բ ա ը ս ե ղ. Բանալին առանց ֆարաջայի հեռու չի գնա (պա-
ուզա):

Ո գ ս ե ն (ման գալով). Նստել ենք, ինչպես մուկը վան-

դակում, թյու... Մարգ խելքը կկորցնի... (մտնում են Անդրե-
ասն ու Նիկողր թեվերի սաղ բունած ծալված ճարագաները):

Ա ն դ ը ե ա ս. Որհնեցեք, հարգելի տերտերներ:

Ո գ ս ե ն. Բարև ձեզ:

Ա ն դ ը ե ա ս. Ինչպես յերևում ե, դուք ֆարաջաների մա-
սին եք խոսում: Ահա նրանք:

Ո գ ս ե ն. Տեր Բարսեղ, մեր ֆարաջաներն են:

Ն ի կ ո լ. Ձերը... ձերը...

Բ ա ը ս ե ղ. Դուք... դուք ելիք առել:

Ա ն դ ը ե ա ս. Այո՛, մենք...

Ո գ ս ե ն (նետելով ուսերի վրա ճարագան). Բա, ի՛նչպես
ե յեղել այդ:

Ն ի կ ո լ. Ներողություն ենք խնդրում, տեր հայրեր...

Ա ն դ ը ե ա ս. Միք նեղանա, մենք զբանցով միայն հեքիմի
մոտ ելինք գնացել, նրանք՝ ուրիշ ժամանակ մեզ հարկավոր ել
չեն: Ես կոստյումի մոզան վաղուց անցել ե:

Ո գ ս ե ն. Բա ձեր ինչի՛ն ելին նրանք հարկավոր հեքիմի
մոտ գնալու համար:

Ա ն դ ը ե ա ս. Հենց նրա, ինչ վոր ձեզ համար: Ել ձեզ
հարկավոր չե նրա մոտ գնալ, մենք ձեր փոխարեն արդեն գնա-
ցինք:

Ո գ ս ե ն. Ինչի՛ համար նրա մոտ գնացիք:

Ա ն դ ը ե ա ս. Բրիլիանտների համար, տեր հայր:

Բ ա ը ս ե ղ. Բրիլիանտների համար:

Ո գ ս ե ն. Սուրբ... սուրբ քրիստոս... (ուժասպառ հստում
ե թախրի վրա): Դուք լուրջ եք խոսում:

Ա ն դ ը ե ա ս. Ձեք հավատում, ահա... (հանում ե գրպանից
թղթի մեջ փաթաթված ֆարեր):

Ո գ ս ե ն. Կողոպտիչներ:

Ն ի կ ո լ. Կողոպտիչներ, այո՛, բայց վոչ թե մենք, այլ
դուք:

Բ ա ը ս ե ղ. Դրանք վանքի բրիլիանտներն են:

Ա ն դ ը ե ա ս. Յերբեկեց յեղել են վանքի, իսկ հիմա պե-
տությանն են:

Ո գ ս ե ն (հաճախվելով Անդրեասի վրա). Շուտ տուր
դրանք:

Ան դր ե ա ս. Կամաց, տերտեր, մենք զբանց պիտի տանք
բայց վոչ թե ձեզ:

Բ ա ը ս ե ղ. Որը ցերեկով կողոպուտ:

Ան դր ե ա ս. Մի գոռաք, թե չե բանտ ել կընկնեք: Գի-
տեք ինչ ե հարկավոր ձեզ այսպիսի բաների համար: Դուք
ինքններդ հիմարութիւն եք արել, դե հիմի ել ձեզ վրա փրփրա-
ցեք: Ձեր վանահայրը ըստ յերևույթին հիմար մարդ չե, բայց
արի տես, վոր նրա ոգնականները կատարյալ հիմարներ են:
Յեթե քիչ խոսեցիք, գուցե ձեր գործը հաջողվեր (վագելով
մտնում ե Մաթոսը, առանց գլխարկի, զգգգված սագեռով: Մի
առ ժամանակ կանգնած նայում ե բոլորին, հետո հետվում ե
Ոգսենի յեվ Բարսեղի վրա):

Մ ա թ ո ս. Ահ, դուք, անիծյալ լինեք:

Ո գ ս ե ն. Դու ի՞նչ ե, խեղճ ես թոցրել:

Մ ա թ ո ս. Հետ տվեք քարերը, սատանն ու ձուտեր (բռնում
ե Ոգսենի կոկորդից):

Ո գ ս ե ն. Թո՛ղ ինձ:

Մ ա թ ո ս. Խաբեբայությամբ առաք, անզգամներ, հետ տուր
քարերը, թե չե կխեղճեմ քեզ:

Բ ա ը ս ե ղ (ուզում ե ազատել). Մաթոս, խելքի արի, մենք
քեզ մոտ չենք յեղել:

Մ ա թ ո ս (պատնելով Ոգսենի Փարոջան, կրծքի սառերը
սեւնում ե). Ահա նա, ահա բանալին: Խաբեբայությամբ բա-
նալին ձեռք են ձգել, խաբեբայությամբ քարերն ել ձեռք ձգե-
ցին: Դրանից բացի հասցեյի փոխարեն ծաղրական գրութիւն
ել են թողել, անիծյալներ:

Ան դր ե ա ս (հրելով Մաթոսին). Շատ մի յեռա, բիձա,
նրանք քեզ մոտ չեն յեղել: Մի հիշիր եդ տերտերներին, մեկ
ել սրանց նայիր:

Մ ա թ ո ս. Յես ենտեղ լավ չնկատեցի: Ահա նրանք
են... բանալին ել նրանց մոտ ե... ահա ե նա Մ. Ա... մեծն
աստված:

Ո գ ս ե ն (ցույց տալով Անդրեասին). Ահա թե ով ե յե-
ղել քեզ մոտ, նրանք են քեզ խաբել:

Մ ա թ ո ս. Մի ստիր:

Ան դր ե ա ս. Ճիշտ ե, ծերուկ, նրանք մեղավոր չեն...
տես... (արագ դնում ե պարիկը): Նո՛ւ... Ճանաչեցի՛ր:

Մ ա թ ո ս. Սատանաներ:

Ան դր ե ա ս. Վոչ թե սատանաներ, այլ կոմսոմոլիստներ
(իջեցնում ե պարիկը):

Ո գ ս ե ն. Քիչ եր մնացել, վոր խեղճեր ինձ (Մաթոսը լուռ
ձգվում ե նստարանի վրա: Գալիս ե Բագրատը):

Բ ա գ ը ա տ. Ոհո՛, եդ ի՞նչքան մարդ ե հավաքվել: Բարև
Մաթոս ախպեր, եդ վո՛ր քամին ե քեզ մեզ մոտ բերել:

Մ ա թ ո ս. Յես... հիվանդի մոտ...

Բ ա գ ը ա տ (կոմսոմոլիստներին). Իսկ դո՛ւք ովքեր եք,
հարգելի պարոններ:

Ան դր ե ա ս. Ովքեր ենք մե՛նք. կոմսոմոլիստներ:

Բ ա գ ը ա տ. Ներողութիւն եմ խնդրում, ներեցեք, հար-
գելի ե թանգագին հյուրեր: Հեռու յեք ձանապարհորդելու:

Ն ի կ ո լ. Մինչև Սովաձոր:

Բ ա գ ը ա տ. Սովաձոր: Հալ, լալ: Մարթն, շուտ արա, սա-
մովարը դիր, հյուրեր ունենք:

Մ ա ը թ ա (վերեվից). Ե՛ս բոլորիս:

Բ ա գ ը ա տ. Ի՞նչ գործով եք գնում Սովաձոր:

Ան դր ե ա ս. Գործով:

Բ ա գ ը ա տ. Ի՞նչ գործով:

Ան դր ե ա ս. Ինչ գործով: Ասում են այնտեղ շատ աղբ
ե հավաքվել... գնում ենք գյուղը մաքրելու...

Բ ա գ ը ա տ. Ի՞նչ աղբի մասին եք խոսում: Այնտեղ մեզ
մոտ, ամեն ինչ կարգին ե: Մենք հանգիստ, խաղաղ ապրում
ենք: Նույնիսկ գյուղխորհուրդ ել ունենք ե ինչպէս կարգն ե,
նախագահ ել, քարտուղար ել կա:

Ն ի կ ո լ. Այո, վոմանք այստեղ շատ ազատ են ապրում,
հենց զբանց հարկավոր ե յերկաթե ձեռնոցների մեջ առնել:

Բ ա գ ը ա տ. Բա վոնց այդպես: Ազատութիւն են տվել ե
հանկարծ յերկաթե ձեռնոցներ:

Ան դր ե ա ս. Տվել են, բայց վոչ բոլորի համար:

Բ ա գ ը ա տ. Վոչինչ չեմ հասկանում (մտածելով ծոծրակն
ե փոքում):

Ն ի կ ո լ. Ժամանակը կգա, կհասկանաս (վագելով մտնում
ե տե՛ր Մանվելը):

Մ ա ն վ ե լ. Բագրատ ախպեր, գեղացիք գալիս են... Բո-
լորը... (սեանելով կոմսոմոլիստներին, վաս դրուքյան մեջ ընկ-
նելով, սկսում ե ուժեղ խնջել քաշկիմակի մեջ):

Բ ա գ Ր ա տ. Գեղացիք:

Ա ն դ Ր Ե ա ս. Ի՞նչ գեղացիք:

Մ ա ն վ Ե Լ. Այստեղ... մեր...

Ա ն դ Ր Ե ա ս. Գնանք տեսնենք (գնում են):

Մ ա ն վ Ե Լ. Դժբաղդություն: Գնում եյի թաղման, տեսնում եմ գյուղխորհրդի առաջ գեղացիք հավաքվել են, իսկ քո բատրակը ինչ վոր պատմում ե... նա գոռում ե. «բավական ե նա մեզ ծաղր ու ծանակ ե արել»... ես քո մասին... «Հիմա ժամանակն ե մեզ խելքի գալ, տեսեք բոլոր գյուղերում կողխողներ են կազմակերպվել, իսկ մենք շան նման տանջվում ենք նրա ձեռքին: Գնանք, բոլորդ ել ինձ հետ»: Յես ձին քչեցի այստեղ: Ո՞հ չեմ կարող (պարզվում ե թախիբ վրա):

Ո գ ս Ե ն. Տեր աստված, մարդիկ ի՞նչ են դարձել:

Մ ա թ ո ս. Ասում եմ ձեզ, վերջը մոտ ե:

Մ ա ն վ Ե Լ. Թնդ Մաթոս, առանց դրան արդեն մեր բանը բուրդ ե. դու ել անվերջ քո «վերջին դատաստանով» զահլա յես տանում:

Մ ա թ ո ս. Յես գիտեմ, աշխարհի վերջը մոտենում ե:

Բ ա գ Ր ա տ (բուռնցով խփում ե սեղանին) Սպասիր դու Ոհան, քեզ հետ հաշիվս կտեսնեմ: Այդպես ես պատասխանում իմ բարությանս (մտնում են Անդրեասն յեվ Նիկոյր) ընկերքաղաքացիներ, ես ի՞նչ բան ե, բայց նրանք... նրանք... սպանել կարող են:

Ա ն դ Ր Ե ա ս. Դու ինքդ ես մեղավորը, ախպեր (գնում ե դեպի պատահանը, դրսից լսվում ե ամբոխի աղմուկն ու կոչը. «դուրս յեկ, բավական ե համբերենք, հիմի հաշիվներս կտեսնենք», «կորչեն կուլակները», «կեցցե կոլխողը». նես ե վագում Մարթան):

Մ ա Ր Թ ա. Բազրատ, գեղացիք:

Բ ա գ Ր ա տ. Լսում եմ ինքս (դռներ բացվում յեվ նես են խուժում գյուղացիք, ամենից առաջ Ոհանն ու Դանիելը):

Ո հ ա ն. Նա այստեղ ե (Բագրասն յեվ սերսերներ մի անկյուն են խոնկում) տեսնում եք ամբողջ մի կամպանիա յեն:

Դ ա ն ի Ե Լ. Ե՛, Բագրատ, մենք յեկել ենք քեզ հետ մեր

հաշիվները մաքրելու... Բոլորդ ել դուրս յեկեք: Ի՞նչ եք գայլերի նման անկյունում խոնկել և լեզուներդ կուլ տվել:

Ա ն դ Ր Ե ա ս (առաջ գալով). Լռեցեք, ընկերներ, թող խոսի մեկը, ի՞նչ եք բոլորդ միասին կռկռում (լռում են բոլորը):

Ո հ ա ն. Ընկերներ, ինչպես առաջ, այնպես ել հիմա, սրանից (ցույց ե ցալիս Բագրասին) մեզ կյանք չկա: Այս խուլ անկյունում նրա համար շատ լավ ե, մենք խավար ժողովուրդ ենք, նա մեզ առաջվա նման շահագործում և տանջում ե:

Դ ա ն ի Ե Լ. Նա ինձ տվել ե 2 չերվոնեց, պետք ե 3 վերադարձնեմ: Բացի դրանից, իմ ձին ել վերցրել ե վորպես գըրավական, ես արդարություն ե:

Ո հ ա ն. Իսկ յես յերեք ամիս ե մի կտոր չոր հացի համար ձրի աշխատում եմ:

1 գ յ ու ղ. Միայն ձեզ չե, բոլորիս ե դաղել: Յես յեղբորս հետ նրանից ցանելու սերմ ենք վերցրել և փոխարեն ինչքան նրան ձրի հող ենք վարել:

2 գ յ ու ղ. Սաղից ել, մեռածից ել միշտ քերթել ե:

Բ ա գ Ր ա տ. Թույլ տվեք ասել...

Ո հ ա ն. Քեզ կարիք չկա խոսելու...

Ա ն դ Ր Ե ա ս. Սնւս կացեք, թնդ խոսի:

Դ ա ն ի Ե Լ. Ճիշտ ե, լսենք, տեսնենք ինչ պիտի ասի:

Բ ա գ Ր ա տ. Գեղացիք, յես եդ բանը ձեզանից չեյի սպասի: Ինչ վոր ել լինի, ձեր ցավը միայն յես եմ իմացել և խղճացել:

Գ յ ու ղ ա ց ի ք. Ե՛հ... խղճացել... գայլը խղճացել ե ձիուն ու թողել ե միայն պոչն ու մազերը: Ի՞նչ լավ ե յերգում:

Ա ն դ Ր Ե ա ս. Լռեցեք, տեսնենք ի՞նչ ե ասելու:

Բ ա գ Ր ա տ. Գուցե յերբեմն մեղավոր եմ յեղել, բայց ասեք, ո՞վ ե մեղանից անմեղը:

Գ յ ու ղ ա ց ի ք. Բավական ե, նա հիմա կսկսի սոխակի նման յերգել. բայց գիտենք թե ինչ ազոափս ես:

Ա ն դ Ր Ե ա ս. Քաղաքացիք (բոլորը լռում են): Յես և իմ ընկերը քաղաքից ուղարկված ենք ձեզ մոտ, գյուղում աշխատելու: Մենք հասել ենք այստեղ գիշերը և գիտենք արդեն, թե ո՞վ ե Բագրատը: Ինչպես յերևում ե, նա ձեզ, բոլորիդ, կարգին դաղել ե ու քերթել:

Գյ ու ղ ա ց ի ք. Գիտենք մենք նրան, նրանից մեզ կյանք
 չկա. նա խեղդել է մեզ:

Ան դ ր ե ա ս. Ձեզ վաղուց եր հարկավոր խելքի գալ: Բայց
 միայն հիշեցեք, վոր բուռնցքներով կուլակի դեմ գնալ չի կարելի:
 Այդպիսի պայքարից մի կուպելի ոգուտ չկա: Վնչ թե ույժ է
 հարկավոր այստեղ, այլ մի ուրիշ բան, ընկերներ: Ձեզ մոտ,
 այստեղ, անտառում, շատ գայլեր կան, ահա ձեզ մի վոհմակ
 (ցույց է սալիս անկյունում հավաքվածներին): Սրանք ան-
 տառի գայլերից ել վտանգավոր են: Սրանց հետ բուռնցքներով
 չեք կարող գլուխ բերել գործը: Դրանց մենք խելքի կբերենք
 միայն այն ժամանակ, յերբ բուլբուս ել ձեռք-ձեռքի տված աշ-
 խատենք: Հիշեցեք, վոր հիմա իշխանությունը, ույժը մեր ձեռ-
 քին է: Ես գայլերը կհավաքեն իրենց պոչերը մեր ույժի ա-
 ուաջ...

Գյ ու ղ ա ց ի ք. Ճիշտ է, ճիշտ է, ույժը մեր կողմն է:
 Նրանց պոչը մի լավ դաղենք, վոր ձղձղան:

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

27. Ա. Մեծարդե.—Պորբրդների վերընտրությունների հիմնական
 խնդիրները 7 »
 28. Պորբրդների վերընտրությունների գործնական խնդիրները . . . 8 »
 29. Ամբաստանի խորհրդները (պիլեսա) 10 »
 30. Առաջինը.—Կուլակության վերացումը և խորհրդների խն
 դիրները 7 »
 31. Բուսանցյալ.—Համատարած կոլեկտիվացման ավարտումը և
 1931 թ. դարնանացանի կամպանիայի խնդիրները 10 »
 32. Կատիլով.—Բուլբուսյան յերկրորդ դարնան մարտական խնդիր
 ները 5 »
 33. Վոսկանյան.—1931 թ. դարնանացանի կամպանիայի գործ
 նական խնդիրները 5 »
 34. Նոր կենցաղի յերգեր 20 »
 35. Ա. Ես Լուսինց.—Բանաստեղծություններ 20 »
 36. Լ. Չառչարին.—Հացահատիկի ֆաբրիկա (Գիլգանտ)
 սովետի մասին) 10 »
 37. Ա. Ա. Անդրեյեվ.—Կուլտուրական շինարարության խնդիր-
 ները 7 »
 38. Պ. Յալցիվ.—Գայլերի վահմակը պիեսա 3 գոր. 25 »

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետարիանի տասնյակայի անդամները գը-
 վածքները
 2. 16-րդ կուսամաստմարի արդյունքները
 3. Հյուսիսային Կովկասի հնգամյակը.—արդյունաբերություն:
 4. Խոզաբուծության կազմակերպումը կոլտոզում:
 5. Կերի հարցը և սելտոացումը:
 6. Կենդանաբուծության ավագ բանվորները պարտականությունները,
 7. Ձեռնարկ ժխտապաղործության համար:
 8. Ճագարաբուծություն:
 9. Թռչնաբուծություն:
 0. Աշխատանքի կազմակերպումը յեվ յեկամաների բաժանումը կոլտո
 զում: կավազույն կոլտոզների փորձը Հյուս. Կովկասում:
 11. Տրանսպորտը և կալսիչը. տեխնիկական ձեռնարկ:
 12. Կոմսոմոլը և կուսակցության խնդիրները:
- Գիլգիլ՝ Ростовн -Д., Буденовский пр., 60, Крайнациздат,



18700

12.195

9155 6 25 409

В. ЯЛЫЦЕВ
ВОЛЧЬЯ СТАЯ
(ПЬЕСА)

На армянском языке